08/04/2008
համար 116 Ն

«ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆԸ» ԵՎ «ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 81-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել «Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը»՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):
2. Հաստատել «Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգը»՝ համաձայն հավելված 2-ի (կցվում է):
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի տեղակալ **Արթուր Ջավադյան**

Հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 116 Ն որոշմամբ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 116 Ն
որոշմամբ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարի
2008 թվականի ---------- -------
թիվ ------- հրամանով

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի
նախագահի տեղակալ

---------- Ա. Ջավադյան
----- ---------- 2008 թ.

Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար՝

---------- Տ. Դավթյան
----- ---------- 2008 թ.

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

Ընդհանուր դրույթներ

«Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգում» ներկայացված ձևակերպումները չեն ներառում տվյալ հաշվի, ենթաբաժնի, բաժնի բոլոր հաշվապահական թղթակցությունները: Ներդրումային ընկերությունները կարող են կատարել սույն հրահանգում չներկայացված հաշվապահական ձևակերպումներ, եթե վերջիններս համապատասխանում են սույն հրահանգի տրամաբանությանը և չեն հակասում գործող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերին:

«Ռեզիդենտ» և «ոչ ռեզիդենտ» տերմինները կիրառելի են սույն հրահանգում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի մայիսի 14-ի թիվ 173 Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության դրամավարկային և բանկային վիճակագրության ձեռնարկում» սահմանված նշանակությամբ:

Սույն հրահանգի իմաստով՝ պետական մասնակցությամբ իրավաբանական անձինք են համարվում այն իրավաբանական անձինք, որոնց կանոնադրական կապիտալում պետական մասնակցությունը կազմում է 50 տոկոս և ավելին:

Սույն հրահանգում օգտագործված քաղաքացիական իրավունքի այլ սուբյեկտների սահմանումները կիրառելի են սույն հրահանգում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում սահմանված նշանակությամբ:

Սույն հրահանգի իմաստով՝ հիմնական են համարվում հաստիքային աշխատողները, այսինքն՝ ներդրումային ընկերության այն աշխատակիցները, որոնց հետ կնքված են անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագրեր:

ԿԱՐԳ_1 – 2 ԱԿՏԻՎՆԵՐ

ԲԱԺԻՆ 10
«ԴՐԱՄԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ»

Բաժին 10-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 100 «Կանխիկ դրամական միջոցներ և վճարային փաստաթղթեր», 101 «Բանկային հաշիվներ»:

Այս բաժնի հաշիվներում հաշվառումը վարվում է դրամաշրջանառությունը կարգավորող օրենսդրությանը համապատասխան:

Ենթաբաժին 100
«Կանխիկ դրամական միջոցներ և վճարային փաստաթղթեր»

100 ենթաբաժինը նախատեսված է ներդրումային ընկերության տրամադրության տակ գտնվող կանխիկ դրամական միջոցների և վճարային փաստաթղթերի հաշվառման համար: Ենթաբաժնում ընդգրկված հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են ներդրումային ընկերության դրամարկղեր մուտքագրված կանխիկ դրամական միջոցները, իսկ կրեդիտում՝ ելքագրված կանխիկ դրամական միջոցները:

1000 «Կանխիկ ՀՀ դրամ դրամարկղում»- այս հաշվում արտացոլվում է ներդրումային ընկերության դրամարկղերում Հայաստանի Հանրապետության դրամի առկայությունն ու շարժը:

1002 «Կանխիկ դրամ ճանապարհին»- այս հաշվում հաշվառվում է ճանապարհին գտնվող կանխիկ դրամը:

Հաշիվը դեբետագրվում է ներդրումային ընկերության դրամարկղից ներդրումային ընկերության ստորաբաժանումներ և այլ կազմակերպություններ կանխիկ դրամ փոխանցելու դեպքում, մինչև փոխանցված կանխիկ դրամի մուտքագրումը հավաստող փաստաթղթերի ստացումը՝

Դտ- 1002

Կտ- 1000 «Կանխիկ ՀՀ դրամ դրամարկղում»:

Հաշիվը կրեդիտագրվում է՝

ա) ներդրումային ընկերության դրամարկղից ներդումային ընկերության ստորաբաժանումներ և այլ կազմակերպություններ փոխանցված կանխիկ դրամը ստորաբաժանումների, այլ կազմակերպությունների դրամարկղեր մուտքագրելու դեպքում՝

Դտ - ստացող կազմակերպությունների հաշիվներ

Կտ- 1002.

բ) ներդրումային ընկերության ստորաբաժանումներից, այլ կազմակերպություններից ստացված կանխիկ դրամը ներդրումային ընկերության դրամարկղ մուտքագրելու դեպքում՝

Դտ- 1000

Կտ- 1002 «Կանխիկ ՀՀ դրամ դրամարկղում»:

1003 «Կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր»- այս հաշվում հաշվառվում է ներդրումային ընկերության կողմից գնված վճարային փաստաթղթերի գումարը:

Հաշիվը դեբետագրվում է ներդրումային ընկերության կողմից վճարային փաստաթղթեր գնելիս՝

Դտ- 1003

Կտ- Դրամական միջոցներ:

Հաշիվը կրեդիտագրվում է ներդրումային ընկերության կողմից վճարային փաստաթղթեր վաճառելիս կամ դրանց դիմաց վճար ստանալիս՝

Դտ- Դրամական միջոցներ

Կտ- 1003:

Ենթաբաժին 101
«Բանկային հաշիվներ»

101 ենթաբաժինը նախատեսված է բանկերում ՀՀ դրամով և արտարժույթով բանկային հաշիվների, կանոնադրական կապիտալի համալրման կուտակման հաշիվների և ցպահանջ ու ժամկետային ավանդների հաշիվների միջոցների հաշվառման համար: Ենթաբաժնում ընդգրկված հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են մուտք եղած, իսկ կրեդիտում՝ ելք եղած դրամական միջոցները:

1010 «Բանկային հաշիվներ ռեզիդենտ բանկերում»- այս հաշվում արտացոլվում են ռեզիդենտ բանկերում ներդրումային ընկերության բանկային հաշիվներում դրամական միջոցների առկայությունն ու շարժը:

1011 «Ռեզիդենտ բանկերում բանկային հաշիվների միջոցներից ստացվելիք տոկոսներ»- հաշիվը նախատեսված է ռեզիդենտ բանկերում ներդրումային ընկերությունների բանկային հաշիվների միջոցներից ստացվելիք տոկոսների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է ռեզիդենտ բանկերում ներդրումային ընկերության բանկային հաշիվների միջոցների դիմաց տոկոսների հաշվեգրում կատարելիս՝

Դտ- 1011

Կտ- 6000 «Տոկոսային եկամուտներ ռեզիդենտ բանկերում բանկային հաշիվների միջոցներից»:

Հաշիվը կրեդիտագրվում է ռեզիդենտ բանկերում ներդրումային ընկերության բանկային հաշիվների միջոցների դիմաց տոկոսներ ստանալիս՝

Դտ -Դրամական միջոցներ

Կտ –1011:

1012 «Բանկային հաշիվներ ոչ ռեզիդենտ բանկերում»- այս հաշվում արտացոլվում են ոչ ռեզիդենտ բանկերում ներդրումային ընկերության բանկային հաշիվներում դրամական միջոցների առկայությունն ու շարժը:

1013 «Ոչ ռեզիդենտ բանկերում բանկային հաշիվների միջոցներից ստացվելիք տոկոսներ»- հաշիվը նախատեսված է ոչ ռեզիդենտ բանկերում ներդրումային ընկերությունների բանկային հաշիվների միջոցներից ստացվելիք տոկոսների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է ոչ ռեզիդենտ բանկերում ներդրումային ընկերության բանկային հաշիվների միջոցների դիմաց տոկոսների հաշվեգրում կատարելիս՝

Դտ- 1013

Կտ- 6001 «Տոկոսային եկամուտներ ոչ ռեզիդենտ բանկերում բանկային հաշիվների միջոցներից»:

Հաշիվը կրեդիտագրվում է ոչ ռեզիդենտ բանկերում ներդրումային ընկերության բանկային հաշիվների միջոցների դիմաց տոկոսներ ստանալիս՝

Դտ -Դրամական միջոցներ

Կտ –1013:

1014 «Կանոնադրական կապիտալի համալրման կուտակման հաշիվ ՀՀ կենտրոնական բանկ»- հաշիվն օգտագործվում է նոր ստեղծվող ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալի ձևավորման և գործող ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալի համալրման նպատակով՝ մինչև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով կանոնադրական կապիտալի գրանցումը, որից հետո այս հաշիվը փակվում է, իսկ դրանում հաշվառված միջոցներն օգտագործվում են ներդրումային ընկերության հայեցողությամբ:

Հաշիվը դեբետագրվում է կանոնադրական կապիտալի ձևավորման և համալրման դեպքում՝

Դտ- 1014

Կտ- 3515 «Կրեդիտորական պարտքեր կանոնադրական կապիտալի համալրման գծով ռեզիդենտների նկատմամբ», 3516 «Կրեդիտորական պարտքեր կանոնադրական կապիտալի համալրման գծով ոչ ռեզիդենտների նկատմամբ»:

Կանոնադրական կապիտալի ձևավորումից կամ համալրումից հետո այս հաշիվը փակվում է:

1015 «Կանոնադրական կապիտալի համալրման կուտակման հաշիվ այլ բանկերում»- հաշիվն օգտագործվում է նոր ստեղծվող ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալի ձևավորման և գործող ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալի համալրման նպատակով՝ մինչև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով կանոնադրական կապիտալի գրանցումը, որից հետո այս հաշիվը փակվում է, իսկ դրանում հաշվառված միջոցներն օգտագործվում են ներդրումային ընկերության հայեցողությամբ:

Հաշիվը դեբետագրվում է կանոնադրական կապիտալի ձևավորման և համալրման դեպքում՝

Դտ- 1015

Կտ- 3515 «Կրեդիտորական պարտքեր կանոնադրական կապիտալի համալրման գծով ռեզիդենտների նկատմամբ», 3516 «Կրեդիտորական պարտքեր կանոնադրական կապիտալի համալրման գծով ոչ ռեզիդենտների նկատմամբ»:

Կանոնադրական կապիտալի ձևավորումից կամ համալրումից հետո այս հաշիվը փակվում է:

1016 «Ստացվելիք տոկոսներ ռեզիդենտ բանկերում կանոնադրական կապիտալի համալրման կուտակման հաշվի միջոցներից»- հաշիվն օգտագործվում է ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալի ձևավորման և համալրման նպատակով բացված հաշվի մնացորդների դիմաց տոկոսների հաշվեգրման համար:

Հաշիվը դեբետագրվում է կանոնադրական կապիտալի համալրման կուտակման հաշվի միջոցների դիմաց տոկոսների հաշվեգրում կատարելիս՝

Դտ - 1016

Կտ- 6002 «Տոկոսային եկամուտներ կանոնադրական կապիտալի համալրման կուտակման հաշիվների միջոցներից»:

Հաշիվը կրեդիտագրվում է կանոնադրական կապիտալի համալրման կուտակման հաշվի միջոցների դիմաց տոկոսներ ստանալիս՝

Դտ -Դրամական միջոցներ

Կտ – 1016:

ԲԱԺԻՆ 11;12
«Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ»

Բաժին 11;12-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 110 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր», 111 «ՀՀ պետական արժեթղթեր», 112 «ՀՀ ոչ պետական արժեթղթեր», 113 «Այլ երկրների պետական արժեթղթեր», 114 «Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր», 115 «Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր» 116;117 «Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր», 118; 119; 120; 121 «Այլ անձանցից ռեպո համաձայնագրերով ձեռքբերված արժեթղթեր», 122 «Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ» և 123 «Ածանցյալ գործիքներ»::

Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների հաշվառումն իրականացվում է ՀՀՀՀՍ 39-ի համաձայն: Բաժնում ընդգրկված հաշիվներն ակտիվային են՝ դեբետում ցույց է տրվում ակտիվների ձեռքբերումը, դրանց արժեքի ավելացումը և տոկոսների կուտակումը, իսկ կրեդիտում՝ դրանց օտարումը, արժեքի նվազումն ու կուտակված տոկոսների ստացումը կամ դուրսգրումը:

Ներդրումները սկզբնական ճանաչման ժամանակ գրանցվում են ձեռքբերման արժեքով, այնուհետև՝ վերագնահատվում իրական արժեքով: Արտարժույթով արտահայտված ակտիվները վերագնահատվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքով՝ համաձայն ՀՀՀՀ 21 ստանդարտի:

Ենթաբաժին 110
«ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր»

Ենթաբաժնում ընդգրկված հաշիվներն օգտագործվում են ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերի հաշվառման համար:

1100 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր» - հաշիվը նախատեսված է ՀՀ ԿԲ կողմից թողարկված զեղչատոկոսային (դիսկոնտային) արժեթղթերի հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է արժեթուղթը ձեռք բերելիս՝ ձեռքբերման արժեքի չափով, ինչպես նաև ձեռք բերված արժեթղթի իրական արժեքի բարձրանալու (դրական վերագնահատման) դեպքում.

Արժեթուղթը ձեռք բերելիս.

Դտ- 1100

Կտ- Դրամական միջոցներ

Արժեթղթի իրական արժեքի բարձրանալու (դրական վերագնահատման) դեպքում.

Դտ – 1100

Կտ- 6278 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերաչափումից ստացված օգուտներ»:

Հաշիվը կրեդիտագրվում է արժեթղթի իրական արժեքի իջնելու (բացասական վերաչափման) դեպքում, ինչպես նաև վաճառքի կամ մարման դեպքում.

Արժեթղթի իրական արժեքի իջնելու (բացասական վերագնահատման) դեպքում.

Դտ - 7305 «Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերաչափումից»

Կտ - 1100

Արժեթուղթը իրացնելիս.

ա) վաճառքի գինը և հաշվեկշռային արժեքը հավասար են՝

Դտ- Դրամական միջոցներ

Կտ-1100

բ) վաճառքի գինը գերազանցում է հաշվեկշռային արժեքը՝

Դտ- Դրամական միջոցներ

Կտ-1100

Կտ-6272 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ»

գ) վաճառքի գինը ցածր է հաշվեկշռային արժեքից՝

Դտ -Դրամական միջոցներ

Դտ -7302 «Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից»

Կտ –1100

1101 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր»- հաշիվը նախատեսված է ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային (կուպոնային) արժեթղթերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1100 հաշվի դեպքում:

1102 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերից ստացվելիք տոկոսներ»- հաշիվը նախատեսված է ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերից ստացվելիք տոկոսների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է տոկոսները հաշվեգրելիս՝

Դտ- 1102

Կտ- 6014 «Տոկոսային եկամուտներ ՀՀ ԿԲ կողմից թողարկած արժեթղթերից»

Հաշիվը կրեդիտագրվում է տոկոսներն ստանալիս՝

Դտ- Դրամական միջոցներ

Կտ- 1102:

Ենթաբաժին 111
«ՀՀ պետական արժեթղթեր»

Ենթաբաժնում ընդգրկված հաշիվներն օգտագործվում են Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից թողարկված արժեթղթերի հաշվառման համար:

1110 «ՀՀ պետական առանց տոկոսի արժեթղթեր»- հաշիվը նախատեսված է Հայաստանի Հանրապետության պետական զեղչատոկոսային (դիսկոնտային) և անտոկոս արժեթղթերի

հաշվառման համար: Հաշիվը դեբետագրվում է արժեթուղթը ձեռք բերելիս՝ ձեռքբերման արժեքի չափով՝

Դտ- 1110

Կտ- Դրամական միջոցներ:

Հաշիվը կրեդիտագրվում է արժեթղթի վաճառքի կամ մարման դեպքում:

Արժեթուղթը իրացնելիս.

ա) վաճառքի գինը գերազանցում է հաշվեկշռային արժեքը՝ դրական վերագնահատման դեպքում՝

Դտ- Դրամական միջոցներ

Կտ-1110

Կտ-1113 «ՀՀ պետական արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ»

Կտ-6272 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ».

բ) վաճառքի գինը գերազանցում է հաշվեկշռային արժեքը և ձեռքբերման արժեքը, բացասական վերագնահատման դեպքում՝

Դտ -Դրամական միջոցներ

Դտ -1113 «ՀՀ պետական արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ»

Կտ -1110

Կտ- 6272 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ».

գ) վաճառքի գինը բարձր է հաշվեկշռային արժեքից և ցածր՝ ձեռքբերման գնից բացասական վերագնահատման դեպքում՝

Դտ- Դրամական միջոցներ

Դտ- 1113 «ՀՀ պետական արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ»

Կտ- 1110

Կտ- 6272 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ».

դ) վաճառքի գինը ցածր է հաշվեկշռային արժեքից և բարձր՝ ձեռքբերման գնից դրական վերագնահատման դեպքում՝

Դտ - Դրամական միջոցներ

Դտ- 7302 «Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից»

Կտ -1110

Կտ -1113 «ՀՀ պետական արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ»

ե) վաճառքի գինը ցածր է հաշվեկշռային արժեքից և ձեռքբերման գնից բացասական վերագնահատման դեպքում՝

Դտ- Դրամական միջոցներ

Դտ- 1113 «ՀՀ պետական արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ»

Դտ- 7302 «Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից»

Կտ- 1110.

զ) վաճառքի գինը ցածր է հաշվեկշռային արժեքից և ձեռքբերման գնից դրական վերագնահատման դեպքում՝

Դտ- Դրամական միջոցներ

Դտ- 7302 «Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից»

Կտ- 1110

Կտ- 1113 «ՀՀ պետական արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ»

1111 «ՀՀ պետական տոկոսային արժեթղթեր»- հաշիվը նախատեսված է Հայաստանի Հանրապետության պետական տոկոսային (կուպոնային) արժեթղթերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1110 հաշվի դեպքում:

1112 «ՀՀ պետական արժեթղթերից ստացվելիք տոկոսներ»- հաշիվը նախատեսված է Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթերից ստացվելիք տոկոսների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է տոկոսները հաշվեգրելիս՝

Դտ- 1112

Կտ- 6010 «Տոկոսային եկամուտներ ՀՀ պետական արժեթղթերից»:

Հաշիվը կրեդիտագրվում է տոկոսներն ստանալիս՝

Դտ- Դրամական միջոցներ

Կտ- 1112:

1113 «ՀՀ պետական արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ»- հաշիվը նախատեսված է Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթերի շուկայական գների փոփոխություններն արտացոլելու համար: Հաշվի մնացորդն ավելացվում կամ հանվում է ձեռքբերման արժեքից՝ իրական արժեքն արտացոլելու համար:

Հաշիվը դեբետագրվում է արժեթղթի իրական արժեքը բարձրանալու դեպքում՝

Դտ- 1113

Կտ- 6278 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերաչափումից ստացված օգուտներ»:

Հաշիվը կրեդիտագրվում է արժեթղթի իրական արժեքը նվազելու դեպքում՝

Դտ- 7305 «Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերաչափումից»

Կտ- 1113:

Ենթաբաժին 112
«ՀՀ ոչ պետական արժեթղթեր»

Ենթաբաժնում ընդգրկված հաշիվներն օգտագործվում են Հայաստանի Հանրապետության ոչ պետական մարմինների կողմից թողարկված արժեթղթերի հաշվառման համար:

1120 «Ներդրումներ արտոնյալ բաժնետոմսերում»- այստեղ հաշվառվում են ներդրումային ընկերությունների ներդրումներն այլ կազմակերպությունների կողմից թողարկած արտոնյալ բաժնետոմսերում:

Հաշիվը դեբետագրվում է բաժնետոմսերը ձեռք բերելիս՝ ձեռքբերման արժեքի չափով՝

Դտ- 1120

Կտ- Դրամական միջոցներ:

Հաշիվը կրեդիտագրվում է բաժնետոմսերը վաճառելիս՝

ա) վաճառքի գինը բարձր է հաշվեկշռային արժեքից՝ դրական վերագնահատման դեպքում՝

Դտ- Դրամական միջոցներ

Կտ-1120

Կտ-1126 «ՀՀ ոչ պետական արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ»

Կտ-6272 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ».

բ) վաճառքի գինը գերազանցում է հաշվեկշռային արժեքը և ձեռքբերման արժեքը, բացասական վերագնահատման դեպքում՝

Դտ -Դրամական միջոցներ

Կտ -1120

Դտ -1126 «ՀՀ ոչ պետական արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ»

Կտ- 6272 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ»

գ) վաճառքի գինը բարձր է հաշվեկշռային արժեքից և ցածր՝ ձեռքբերման գնից բացասական վերագնահատման դեպքում՝

Դտ- Դրամական միջոցներ

Դտ- 1120

Կտ- 1126 «ՀՀ ոչ պետական արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ»

Կտ- 6272 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ».

դ) վաճառքի գինը ցածր է հաշվեկշռային արժեքից և բարձր՝ ձեռքբերման գնից դրական վերագնահատման դեպքում՝

Դտ - Դրամական միջոցներ

Դտ -7302 «Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից»

Կտ - 1120

Կտ –1126 «ՀՀ ոչ պետական արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ»

ե) վաճառքի գինը ցածր է հաշվեկշռային արժեքից և ձեռքբերման գնից բացասական վերագնահատման դեպքում՝

Դտ- Դրամական միջոցներ

Դտ- 1126 «ՀՀ ոչ պետական արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ»

Դտ-7302 «Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից»

Կտ- 1120.

զ) վաճառքի գինը ցածր է հաշվեկշռային արժեքից և ձեռքբերման գնից դրական վերագնահատման դեպքում՝

Դտ- Դրամական միջոցներ

Դտ- 7302 «Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից»

Կտ- 1120

Կտ- 1126 «ՀՀ ոչ պետական արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ»

1121«Ներդրումներ սովորական բաժնետոմսերում»- այստեղ հաշվառվում են ներդրումային ընկերության ներդրումներն այլ կազմակերպությունների թողարկած սովորական բաժնետոմսերում: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1120 հաշվի դեպքում:

1122 «Այլ փայամասնակցություններ»- այստեղ հաշվառվում է ներդրումային ընկերության փայամասնակցությունը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1120 հաշվի դեպքում:

1123 «ՀՀ ոչ պետական տոկոսային արժեթղթեր»- հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1111 «ՀՀ պետական տոկոսային արժեթղթեր» հաշվի դեպքում:

1124 «ՀՀ ոչ պետական արժեթղթերից ստացվելիք տոկոսներ»- հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1112 «ՀՀ պետական արժեթղթերից ստացվելիք տոկոսներ» հաշվի դեպքում:

1125 «ՀՀ ոչ պետական առանց տոկոսի արժեթղթեր»- հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1110 «ՀՀ պետական առանց տոկոսի արժեթղթեր» հաշվի դեպքում:

1126 «ՀՀ ոչ պետական արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ»- հաշիվը նախատեսված է Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթերի շուկայական գների փոփոխություններն արտացոլելու համար: Հաշվի մնացորդն ավելացվում կամ հանվում է ձեռքբերման արժեքից՝ իրական արժեքն արտացոլելու համար:

Հաշիվը դեբետագրվում է արժեթղթի իրական արժեքը բարձրանալու դեպքում՝

Դտ- 1126

Կտ- 6278 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերաչափումից ստացված օգուտներ»:

Հաշիվը կրեդիտագրվում է արժեթղթի իրական արժեքը նվազելու դեպքում՝

Դտ- 7305 «Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերաչափումից»

Կտ- 1126:

Ենթաբաժին 113
«Այլ երկրների պետական արժեթղթեր»

Ենթաբաժնում ընդգրկված հաշիվներն օգտագործվում են այլ երկրների թողարկած պետական արժեթղթերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 111 ենթաբաժնի հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 114
«Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր»

Ենթաբաժնում ընդգրկված հաշիվներն օգտագործվում են այլ երկրների թողարկած ոչ պետական արժեթղթերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 111 ենթաբաժնի հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 115
«Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր»

Ենթաբաժնում ընդգրկված հաշիվներն օգտագործվում են միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկած ոչ պետական արժեթղթերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 111 ենթաբաժնի հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 116;117
«Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր»

Այս ենթաբաժնի հաշիվներն օգտագործվում են բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ռեպո համաձայնագրերով արժեթղթեր գնող ներդրումային ընկերությունը: Ենթաբաժնի հաշիվների դեբետում գրանցվում են արժեթղթերի ձեռքբերման, իսկ կրեդիտում՝ վաճառքի ձևակերպումները: 1179 «Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ» հաշվում արտացոլվում են ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի շուկայական գների փոփոխությունները՝ դեբետում՝ գների աճը, կրեդիտում՝ գների նվազումը:

Հաշվառումն իրականացվում է ՀՀՀՀՍ 39-ի սկզբունքներին համապատասխան:

1160 «Ռեզիդենտ բանկերից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված ՀՀ տոկոսային պետական արժեթղթեր»-հաշիվը նախատեսված է ռեպո համաձայնագրով ռեզիդենտ բանկերից ձեռք բերված արժեթղթերի հաշվառման համար:

Գնորդ ներդրումային ընկերությունը արժեթղթերը ստանալուց հետո այդ արժեթղթերի գնման գնով կատարում է հետևյալ ձևակերպումները.

1) Դտ- 1160 «Ռեզիդենտ բանկերից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված ՀՀ տոկոսային պետական արժեթղթեր»

Կտ- 3201 «Պարտավորություններ ռեպո համաձայնագրերի գծով ռեզիդենտ բանկերի նկատմամբ»

2) Դտ-1402 «Ռեպո համաձայնագրեր ռեզիդենտ բանկերի հետ»

Կտ-Դրամական միջոցներ:

Ներդրումային ընկերությունը ռեպո համաձայնագրով ձեռքբերված, սակայն ռեպո համաձայնագրի գործողության ժամկետի ընթացքում վերավաճառած արժեթղթերի փոխարեն ռեպո համաձայնագրում նշված թողարկմանը համապատասխանող արժեթղթեր ձեռք բերելիս դրանք պետք է արտացոլի 116; 117 ենթաբաժնի համապատասխան հաշիվներում, իսկ դրանց ձեռքբերման գնի և ընթացիկ (շուկայական) գնի տարբերությունը՝ եկամուտներում կամ վնասներում:
Այս ենթաբաժնի մյուս հաշիվների (բացառությամբ 1179 հաշվի) հաշվառումը տարվում է նույն կերպ, ինչ-որ 1160 հաշվի դեպքում:

1179 «Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ»- հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության կողմից բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ռեպո համաձայնագրերով ձեռքբերված ՀՀ պետական և այլ արժեթղթերի շուկայական գնի փոփոխություններն արտացոլելու համար:
Եթե ներդրումային ընկերությունը մինչև ռեպո համաձայնագրի գործողության ժամկետի ավարտը շուկայում վաճառում է ռեպոյով ձեռք բերված արժեթղթերը, ապա տրվում է հետևյալ ձևակերպումները.

1) Ճշգրտվում է ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գինը՝ հիմք ընդունելով արժեթղթերի ընթացիկ (շուկայական) գինը՝

ա) Դտ-116;117 «Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր» ենթաբաժնի համապատասխան հաշիվ
Կտ-1179«Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ» և
Դտ-1179 «Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ»
Կտ- 320 «Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ռեպո համաձայանգրերի գծով» համապատասխան հաշիվ, եթե արժեթղթերի ընթացիկ (շուկայական) գինն ավելի բարձր է
բ) Դտ-1179 «Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ»
Կտ-116;117 «Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր» ենթաբաժնի համապատասխան հաշիվ և
Դտ- 320 «Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ռեպո համաձայնագրերի գծով» համապատասխան հաշիվ
Կտ- 1179 «Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ», եթե արժեթղթերի ընթացիկ (շուկայական) գինն ավելի ցածր է

2) Արժեթղթերի վերավաճառքից ֆինանսական արդյունքի արտացոլում.

գ) Արժեթղթերի վերավաճառքի գինը բարձր է ընթացիկ (շուկայական) գնից՝
Դտ- Դրամական միջոցներ
Կտ-116;117 «Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր»
Կտ-6281 «Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի վերավաճառքից օգուտներ»,
դ) Արժեթղթերի վերավաճառքի գինը ցածր է ընթացիկ (շուկայական) գնից՝
Դտ- Դրամական միջոցներ
Դտ-7309 «Կորուստներ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի վերավաճառքից»
Կտ-116;117 «Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր»:

Ռեպո համաձայնագրով ձեռքբերված, սակայն մինչև ռեպո համաձայնագրի գործողության ժամկետի ավարտը վերավաճառած արժեթղթերի փոխարեն ռեպո համաձայնագրում նշված թողարկմանը համապատասխանող արժեթղթեր ձեռքբերելիս ներդրումային ընկերությունը ձևակերպվում է.

1) Ճշգրտվում է ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով պարտավորությունների գումարը՝ հիմք ընդունելով արժեթղթերի ընթացիկ (շուկայական) գինը՝
ե) Եթե արժեթղթի ձեռքբերման գինը բարձր է ընթացիկ (շուկայական) գնից՝
Դտ-1179 «Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ»
Կտ-320 «Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ռեպո համաձայանգրերի գծով» ենթաբաժնի համապատասխան հաշիվներ

զ) Եթե արժեթղթի ձեռքբերման գինը բարձր է ընթացիկ (շուկայական) գնից՝
Դտ-320 «Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ռեպո համաձայանգրերի գծով» ենթաբաժնի համապատասխան հաշիվներ
Կտ-1179 «Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ»:

2) Արժեթղթերի ձեռքբերման ֆինանսական արդյունքի արտացոլում.
է) Եթե արժեթղթի գնման գինը ցածրէ ընթացիկ (շուկայական) գնից՝
Դտ 116;117 «Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր»
Կտ- Դրամական միջոցներ
Կտ- 6281 «Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի վերավաճառքից օգուտներ»,
ը) Եթե արժեթղթի գնման գինը բարձրէ ընթացիկ (շուկայական) գնից՝
Դտ-115 «Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր»
Դտ-7309 «Կորուստներ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի վերավաճառքից»
Կտ- Դրամական միջոցներ:

Ենթաբաժին 118;119;120; 121
«Այլ անձանցից ռեպո համաձայնագրերով ձեռքբերված արժեթղթեր»

Հաշվառումը տարվում է 116; 117 «Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր» ենթաբաժնի հաշիվների հաշվառման սկզբունքով:

Ենթաբաժին 122
«Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ»

Այս ենթաբաժնի հաշիվներն օգտագործվում են ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ ֆակտորինգային այնպիսի գործարքների հաշվառման համար, որոնց գծով պահանջները ներդրումային ընկերությունը մտադիր չէ պահել մինչև վճարում ստանալը, այլ վաճառելու է մինչև մարման (վճարման) ժամկետը: Հաշվառումը տարվում է առևտրական նպատակներով պահվող արժեթղթերի հաշվառման սկզբունքով՝ համաձայն՝ ՀՀՀՀՍ 39-ի և ՀՀՀՀՍ 32-ի:

Ենթաբաժին 123
«Ածանցյալ գործիքներ»

Այս ենթաբաժնի հաշիվներն օգտագործվում են առևտրական նպատակներով պահվող ածանցյալ գործիքների հաշվառման նպատակով:

Հաշվեկշռում ածանցյալ գործիքն արտացոլվում է պայմանագրի կնքման օրվանից: Հաշվառումը տարվում է իրական արժեքով՝ վերագնահատման արդյունքն արտացոլելով

եկամուտներում կամ ծախսերում: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՀՍ 32, ՀՀՀՀՀՍ 39 ստանդարտների և դրանց հաշվառումը կարգավորող կարգերի համաձայն:

ԲԱԺԻՆ 13
«Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ»

Բաժին 13-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 130 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր», 131 «ՀՀ պետական արժեթղթեր», 132 «ՀՀ ոչ պետական արժեթղթեր», 133 «Այլ երկրների պետական արժեթղթեր», 134 «Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր», 135 «Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր», 136 «Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ»:

Բաժնում ընդգրկված հաշիվներն ակտիվային են՝ դեբետում ցույց են տրվում ակտիվների ձեռքբերումը, դրանց արժեքի ավելացումը և տոկոսների կուտակումը, իսկ կրեդիտում՝ դրանց օտարումը, արժեքի նվազումն ու կուտակված տոկոսների ստացումը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների հաշվառումն իրականացվում է ՀՀՀՀՍ 39-ի համաձայն: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 11;12 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ» բաժնի հաշիվների դեպքում, բացառությամբ՝ մեկ տարբերության. իրական արժեքով վերագնահատման ժամանակ վերագնահատման արդյունքը ներդրումային ընկերության ընտրությամբ արտացոլվում է կամ եկամուտներում (ծախսերում), կամ սեփական կապիտալում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների շուկայական գնի ճշտման 1303, 1313, 1326, 1333, 1346, 1353, 1366 հաշիվներն արժեթղթերի շուկայական գնի փոփոխության դեպքում թղթակցում են կամ 6279 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերաչափումից ստացված օգուտներ» և 7306 «Կորուստներ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերաչափումից» հաշիվների կամ 5123 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերաչափումից առաջացած չիրացված շահույթ/վնաս» հաշվի հետ:

ԲԱԺԻՆ 14
«Ռեպո համաձայնագրեր և արժութային սվոպ »

Բաժին 14-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 140;141 «Ռեպո համաձայնագրեր բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ», 142;143 «Ռեպո համաձայնագրեր այլ անձանց հետ», 144;145 «Արժութային սվոպ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ», 146;147 «Արժութային սվոպ այլ անձանց հետ»:

Ենթաբաժին 140;141
«Ռեպո համաձայնագրեր բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ»

Այս բաժնի հաշիվներն օգտագործվում են բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրերով արժեթղթեր գնող ներդրումային ընկերության կողմից:

1402 «Ռեպո համաձայնագրեր ռեզիդենտ բանկերի հետ»- հաշիվը նախատեսված է ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերի հաշվառման համար:

Գնորդ ներդրումային ընկերությունը արժեթղթերը ստանալուց հետո այդ արժեթղթերի գնման գնով կատարում է հետևյալ ձևակերպումները.

1) Դտ-1402 «Ռեպո համաձայնագրեր ռեզիդենտ բանկերի հետ»
Կտ-Դրամական միջոցներ և միևնույն ժամանակ

2) Դտ- 1160 «Ռեզիդենտ բանկերից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված ՀՀ տոկոսային պետական արժեթղթեր», 1161 «Ռեզիդենտ բանկերից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված ՀՀ ոչ տոկոսային պետական արժեթղթեր», 1162 «Ռեզիդենտ բանկերից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված ՀՀ ԿԲ արժեթղթեր», 1163 «Ռեզիդենտ բանկերից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված բաժնետոմսեր», 1164 «Ռեզիդենտ բանկերից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված տոկոսային ոչ պետական արժեթղթեր», 1165 «Ռեզիդենտ բանկերից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված առանց տոկոսի ոչ պետական այլ արժեթղթեր»

Կտ- 3201 «Պարտավորություններ ռեպո համաձայանգրերի գծով ռեզիդենտ բանկերի նկատմամբ»:
Ռեպո համաձայնագրի գործողության ժամկետը լրանալիս կատարվում է հետևյալ ձևակերպումները.
1) Դտ-Դրամական միջոցներ
Կտ-1402 «Ռեպո համաձայնագրեր ռեզիդենտ բանկերի հետ», և միաժամանակ

2) Դտ-3201 «Պարտավորություններ ռեպո համաձայանգրերի գծով ռեզիդենտ բանկերի նկատմամբ»
Կտ-1160 «Ռեզիդենտ բանկերից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված ՀՀ տոկոսային պետական արժեթղթեր», 1161 «Ռեզիդենտ բանկերից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված ՀՀ ոչ տոկոսային պետական արժեթղթեր», 1162 «Ռեզիդենտ բանկերից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված ՀՀ ԿԲ արժեթղթեր», 1163 «Ռեզիդենտ բանկերից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված բաժնետոմսեր», 1164 «Ռեզիդենտ բանկերից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված տոկոսային ոչ պետական արժեթղթեր», 1165 «Ռեզիդենտ բանկերից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված առանց տոկոսի ոչ պետական այլ արժեթղթեր»:

3) 1179 «Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ» հաշվի մնացորդը դուրս է գրվում եկամուտներին կամ ծախսերին:

1403 «Ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերից ստացվելիք տոկոսներ»- հաշիվը նախատեսված է ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերից ստացվելիք տոկոսների հաշվեգրման համար:
Գնորդ ներդրումային ընկերությունը մինչև ռեպո համաձայնագրի գործողության ավարտը յուրաքանչյուր օր կատարում է տոկոսների հաշվեգրում.
Դտ-1403 «Ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերից ստացվելիք տոկոսներ»
Կտ-6061 «Տոկոսային եկամուտներ ռեզիդենտ բանկերի հետ ռեպո համաձայնագրերից»
Տոկոսները գանձելիս ձևակերպում է.
Դտ-Դրամական միջոցներ
Կտ-1403 «Ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերից ստացվելիք տոկոսներ»:

Ենթաբաժին 142;143
«Ռեպո համաձայնագրեր այլ անձանց»

Այս բաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն ձևով ինչ-որ 140;141 «Ռեպո համաձայնագրեր բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ» բաժնի հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 144;145
«Արժութային սվոպ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ արժութային սվոպի և դրա գծով ստացվելիք տոկոսների հաշվառման համար:
ՀՀ դրամի տրամադրումը արտացոլելու համար՝
Դտ-144;145
ենթաբաժնի համապատասխան հաշիվներ
Կտ-դրամական միջոցներ
Տրամադրված դրամական միջոցների դիմաց նախատեսված ստացվելիք տոկոսները հաշվեգրելու համար՝
Դտ-144;145 ենթաբաժնի համապատասխան հաշիվներ
Կտ-608 «Տոկոսային եկամուտներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ արժութային սվոպից» ենթաբաժնի համապատասխան հաշիվներ
ՀՀ դրամի ետ ստացումն արտացոլելու համար՝
Դտ--դրամական միջոցներ

Կտ-144;145 ենթաբաժնի համապատասխան հաշիվներ
Հաշվեգրված տոկոսագումարները ստանալիս՝
Դտ- Դրամական միջոցներ
Կտ-144;145 ենթաբաժնի համապատասխան հաշիվներ:

Ենթաբաժին 146;147
«Արժութային սվոպ այլ անձանց հետ»

Այլ ենթաբաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն կերպ, ինչ-որ 144;145 «Արժութային սվոպ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ» ենթաբաժնի հաշիվների դեպքում:

ԲԱԺԻՆ 15
«Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները.150;151 «Ռեպո համաձայնագրերով բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին վաճառված արժեթղթեր», 152;153; 154 «Ռեպո համաձայանագրերով այլ անձանց վաճառված արժեթղթեր»: Այս ենթաբաժինների հաշիվներն օգտագործում է ռեպո համաձայնագրերով արժեթղթեր վաճառող ներդրումային ընկերությունը: Հաշվառումն իրականացվում է ՀՀՀՀՍ 39-ի սկզբունքներին համապատասխան: Հաշվառման սկզբունքները նկարագրված են 32 բաժնի մեկնաբանություններում:

ԲԱԺԻՆ 16
«Արժութային սվոպով վաճառված արժույթ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 160 «Արժութային սվոպով վաճառված արժույթ բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին», 161 «Արժութային սվոպով այլ անձանց վաճառված արժութ»: Բաժնում ընդգրկված հաշիվներն ակտիվային են՝ դեբետում ցույց է տրվում ներդրումային ընկերության ունեցած պահանջների ավելացումը, իսկ կրեդիտում՝ դրանց նվազումը:

Ենթաբաժին 160
«Արժութային սվոպով վաճառված արժույթ բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են արժութային սվոպով վաճառված արտարժույթի հաշվառման համար:
Արտարժույթի տրամադրումը և դրա հետգնման իրավունքը արտացոլելու համար՝
Դտ-160 ենթաբաժնի համապատասխան հաշիվ
Կտ-դրամական միջոցներ:
Արտարժույթի ստացումն արտացոլելու համար՝
Դտ-դրամական միջոցներ
Կտ-160 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

16 բաժնի մյուս ենթաբաժնում ընդգրկված հաշիվների հաշվառումը տարվում է նույն ձևով, ինչ-որ 160 ենթաբաժնի հաշիվների հաշվառումը:

ԲԱԺԻՆ 17
«Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 170 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր», 171 «ՀՀ պետական արժեթղթեր», 172 «ՀՀ ոչ պետական արժեթղթեր», 173 «Այլ երկրների պետական արժեթղթեր», 174 «Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր», 175 «Միջազգային

ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր», 176;177 «Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ», 178 «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեզրկման պահուստ»:

Բաժնում ընդգրկված բոլոր հաշիվները (բացառությամբ՝ 1780 «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեզրկման պահուստ» հաշվի) ակտիվային են՝ դեբետում ցույց է տրվում ներդրումային ընկերության ունեցած պահանջների ավելացումը, իսկ կրեդիտում՝ դրանց նվազումը: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների սկզբնական գրանցումը կատարվում է ձեռքբերման արժեքով (անվանական արժեքին գումարած հավելավճար կամ հանած զեղչատոկոս), իսկ այնուհետև՝ ամորտիզացված արժեքով: Սկզբնական գրանցման ժամանակ մինչև ձեռքբերումն ակտիվի գծով կուտակված և չվճարված տոկոսների գումարով ներդրումային ընկերությունը դեբետագրում է ստացվելիք տոկոսների հաշիվները: Զեղչատոկոսի կամ հավելավճարի համար գործում են առանձին հաշիվներ, դրանց գումարը դուրս է գրվում (ամորտիզացվում) եկամուտների հաշվին՝ օգտագործելով էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդը: Եթե ներդրումային ընկերությունն այս կարգի ակտիվները վերադասակարգում է որպես առևտրական նպատակներով պահվող կամ վաճառքի համար մատչելի ակտիվներ, ապա գրանցումը կատարվում է դրանց՝ տվյալ օրվա շուկայական (իրական) գնի համաձայն: Այն դեպքում, երբ ներդրումները վերադասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող ակտիվներ, ապա գնահատման ժամանակ առաջացած շահույթը կամ վնասը, հաշվարկված որպես իրական արժեքի և մինչև մարման ժամկետը պահվող ներդրման հաշվեկշռային արժեքի միջև եղած տարբերություն, գրանցվում է եկամուտների հաշվետվության մեջ՝ որպես իրացված շահույթ կամ վնաս: Եթե ակտիվը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի, ապա վերագնահատման արդյունքը, որպես իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի միջև եղած տարբերություն, գրանցվում է կամ հաշվեկշռի կապիտալի 5123 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերաչափումից առաջացած չիրացված շահույթ/վնաս» հաշվում, կամ եկամուտներում (ծախսերում):

Ըստ ՀՀՀՀՍ 21-ի՝ այս հաշիվների արտարժութային մնացորդները վերագնահատվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքով:

Ենթաբաժին 170
«ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր»

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները նախատեսված են Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից թողարկված արժեթղթերի հաշվառման համար: Եթե արժեթղթերը ձեռք են բերվել անվանականից բարձր կամ ցածր արժեքով, ապա հավելավճարի կամ զեղչատոկոսի համար օգտագործվում են առանձին հաշիվներ:

1700 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր»- հաշիվը նախատեսված է Հայաստանի Հանրապետության ՀՀ ԿԲ կողմից թողարկված զեղչատոկոսային (դիսկոնտային) և անտոկոս արժեթղթերի հաշվառման համար: Զեղչատոկոսային արժեթղթերից եկամուտը ստացվում է անվանական արժեքի ու ձեռքբերման գնի տարբերություն հանդիսացող զեղչի (դիսկոնտի) ամորտիզացիայի միջոցով:

Հաշիվը դեբետագրվում է արժեթուղթը ձեռք բերելիս՝

Դտ-1700 (անվանական արժեքով)

Կտ- 1701 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս» (ձեռքբերման գնի և անվանական արժեքի տարբերության չափով)

Կտ- Դրամական միջոցներ (ձեռքբերման արժեքով):

Հաշիվը կրեդիտագրվում է արժեթղթի մարման դեպքում՝

Կտ- 1700

Դտ- Դրամական միջոցներ:

1701 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս» - այս հաշվում հաշվառվում է մինչև մարման ժամկետը պահվող ՀՀ ԿԲ զեղչատոկոսով (դիսկոնտային) արժեթղթերի զեղչատոկոսը: Մինչև արժեթղթի մարման ժամկետը ներդրումային ընկերությունը էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով կատարում է զեղչատոկոսի ամորտիզացիա՝ այն դուրս գրելով եկամուտների հաշվին՝

Դտ- 1701 «ՀՀ պետական առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս»
Կտ- 6034 «Տոկոսային եկամուտներ ՀՀ ԿԲ կողմից թողարկած արժեթղթերից»:

Ամորտիզացիայի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ. ենթադրենք, ներդրումային ընկերությունը ձեռք է բերել 1000 դրամ անվանական արժեքով 3 ամիս ժամկետով պարտատոմսեր: Պարտատոմսերը ձեռք են բերվել յուրաքանչյուրը՝ 942.3 դրամով: Ընդունենք, որ ամորտիզացիայի հաշվարկը կատարվում է ամսական կտրվածքով, հետևաբար, եկամտաբերությունը նույնպես պետք է հաշվել ամսական կտրվածքով: Ներկա արժեքի բանաձևով գտնում ենք, որ 1000 դրամ ապագա արժեքի, 942.3 դրամ ներկա արժեքի և 3 ամիս ժամանակահատվածի համար ամսական եկամտաբերությունը կազմում է 2%:

942.3 ձեռքբերման արժեքը բազմապատկվում է 0.02-ով (2%): Արդյունքը՝ 18.85 դրամ, իրենից ներկայացնում է ամորտիզացիայի գումարն առաջին ամսվա համար: 18.85 դրամն ավելանում է 942.3 դրամ ձեռքբերման արժեքին, և ստացվում է նոր հաշվեկշռային արժեքը: Երկրորդ և երրորդ ամիսների համար նույնպես 0.02-ը բազմապատկվում է պարտատոմսի ընթացիկ արժեքին՝ ստանալով ամորտիզացիայի գումարը: Երրորդ ամսվա վերջում հաշվեկռային արժեքը հավասարվում է 1000-ի: Այսինքն՝ զեղչատոկոսն ամբողջությամբ ամորտիզացված է:

Արժեթղթի մարման օրը 1000 դրամ արժեքով կատարվում է հետևյալ ձևակերպումը՝
Կտ- 1701
Դտ- Դրամական միջոցներ:

1702 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր»- այս հաշվում հաշվառում են տոկոսային եկամուտ բերող ՀՀ ԿԲ արժեթղթերը: Այս ներդրումները կարող են ձեռք բերվել ինչպես անվանական արժեքով, այնպես էլ դրանից բարձր կամ ցածր գնով՝ կախված արժեթղթերի կուպոնային և շուկայական տոկոսադրույքների մակարդակից:

Հաշիվը դեբետագրվում է ՀՀ ԿԲ տոկոսային արժեթղթեր ձեռք բերելիս:

Եթե արժեթուղթը ձեռք է բերվել զեղչով, ապա տրվում է հետևյալ ձևակերպումը՝
Դտ- 1702(անվանական արժեքով)
Կտ- 1703 « ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս»
Կտ- Դրամական միջոցներ (ձեռքբերման գնով):

Եթե արժեթուղթը ձեռք է բերվել հավելավճարով, ապա տրվում է հետևյալ ձևակերպումը՝
Դտ- 1702 (անվանական արժեքով)
Դտ- 1704 « ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի հավելավճար»
Կտ- Դրամական միջոցներ (ձեռքբերման գնով):

1703 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս»- հաշիվը նախատեսված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տոկոսային արժեթղթերի զեղչատոկոսի հաշվառման համար: Զեղչատոկոսի ամորտիզացիան կատարվում է էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով:

Մինչև արժեթղթի մարման ժամկետը ներդրումային ընկերությունը կատարում է զեղչատոկոսի ամորտիզացիա՝ այն դուրս գրելով եկամուտների հաշվին՝

Դտ- 1703 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս» (էֆեկտիվ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամտի և ստացվելիք կուպոնային տոկոսների տարբերության գումարով)
Կտ- 6034 «Տոկոսային եկամուտներ ՀՀ ԿԲ կողմից թողարկած արժեթղթերից»:

1704 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի հավելավճար»- հաշիվը նախատեսված է ՀՀ ԿԲ տոկոսային արժեթղթերի հավելավճարի հաշվառման համար: Հավելավճարի ամորտիզացիան կատարվում է էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով:

Մինչև արժեթղթի մարման ժամկետը ներդրումային ընկերությունը կատարում է հավելավճարի ամորտիզացիա՝ այն դուրս գրելով եկամուտներից՝

Դտ- 6034 «Տոկոսային եկամուտներ ՀՀ ԿԲ կողմից թողարկած արժեթղթերից»

Կտ- 1704 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի հավելավճար»- (էֆեկտիվ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամտի և ստացվելիք կուպոնային տոկոսների տարբերության գումարով):

1705 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերից ստացվելիք տոկոսներ»- հաշիվը նախատեսված է ՀՀ ԿԲ տոկոսային արժեթղթերից ստացվելիք տոկոսների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է՝

ա) ՀՀ ԿԲ տոկոսային արժեթղթերի ձեռքբերման դեպքում, գնի մեջ ներառված կուտակված, բայց դեռևս չվճարված տոկոսների չափով՝

Դտ- 1705 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերից ստացվելիք տոկոսներ»

Կտ- Դրամական միջոցներ.

բ) ՀՀ ԿԲ տոկոսային արժեթղթերի գծով տոկոսներ հաշվեգրելիս՝

Դտ- 1705 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերից ստացվելիք տոկոսներ» (կուպոնային տոկոսադրույք բազմապատկած անվանական արժեք)

Կտ- 6034 «Տոկոսային եկամուտներ ՀՀ ԿԲ կողմից թողարկած արժեթղթերից»:

Հաշիվը կրեդիտագրվում է ՀՀ ԿԲ կողմից թողարկած տոկոսային արժեթղթերի տոկոսները ստանալիս՝

Դտ- Դրամական միջոցներ

Կտ- 1705 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերից ստացվելիք տոկոսներ»:

Ենթաբաժին 171
«ՀՀ պետական արժեթղթեր»

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները նախատեսված են Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթերի հաշվառման համար: Եթե արժեթղթերը ձեռք են բերվել անվանականից բարձր կամ ցածր արժեքով, ապա հավելավճարի կամ զեղչատոկոսի համար օգտագործվում են առանձին հաշիվներ: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 170 ենթաբաժնի հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 172
«ՀՀ ոչ պետական արժեթղթեր»

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները նախատեսված են Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթերի հաշվառման համար: Եթե արժեթղթերը ձեռք են բերվել անվանականից բարձր կամ ցածր արժեքով, ապա հավելավճարի կամ զեղչատոկոսի համար օգտագործվում են առանձին հաշիվներ: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 170 ենթաբաժնի հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 173
«Այլ երկրների պետական արժեթղթեր»

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները նախատեսված են այլ երկրների պետական մարմինների կողմից թողարկված արժեթղթերի հաշվառման համար: Եթե արժեթղթերը ձեռք են բերվել անվանականից բարձր կամ ցածր արժեքով, ապա հավելավճարի կամ զեղչատոկոսի համար օգտագործվում են առանձին հաշիվներ: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 170 ենթաբաժնի հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 174
«Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր»

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները նախատեսված են այլ երկրների ոչ պետական արժեթղթերի հաշվառման համար: Եթե արժեթղթերը ձեռք են բերվել անվանականից բարձր կամ ցածր արժեքով, ապա հավելավճարի կամ զեղչատոկոսի համար օգտագործվում են առանձին հաշիվներ: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 170 ենթաբաժնի հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 175
«Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր»

Այս ենթաբաժնում նախատեսված են հաշիվներ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթերի հաշվառման համար: Եթե արժեթղթերը ձեռք են բերվել անվանականից բարձր կամ ցածր արժեքով, ապա հավելավճարի կամ զեղչատոկոսի համար օգտագործվում են առանձին հաշիվներ: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 170 ենթաբաժնի հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 176;177
«Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք գումարները հաշվառելու համար:

1760 «Ստացվելիք գումարներ ռեզիդենտ բանկերի հետ ֆակտորինգային գործառնություններից»- այս հաշիվը նախատեսված է ռեզիդենտ բանկերի հետ ֆակտորինգային գործառնությունների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է ֆակտորինգային գործառնության գծով վճարում կատարելիս՝ պահանջի ամբողջ գումարի չափով՝

Դտ- 1760

Կտ- 1761 «Ռեզիդենտ բանկերի հետ ֆակտորինգային գործառնությունների զեղչատոկոս»

Կտ- Դրամական միջոցներ:

Հաշիվը կրեդիտագրվում է ֆակտորինգային գործառնության գծով ստանալիք գումարը հավաքագրելիս՝

Դտ- Դրամական միջոցներ

Կտ- 1760:

1761 «Ռեզիդենտ բանկերի հետ ֆակտորինգային գործառնությունների զեղչատոկոս»- հաշիվը նախատեսված է ֆակտորինգային գործառնության գծով ստացվելիք զեղչատոկոսը հաշվառելու համար:

Հաշիվը կրեդիտագրվում է ֆակտորինգային գործառնության գծով վճարում կատարելիս՝ ստացվելիք զեղչատոկոսի գումարի չափով՝

Դտ-1760«Ստացվելիք գումարներ ռեզիդենտ բանկերի հետ ֆակտորինգային գործառնություններից»-

Կտ -1761

Ներդրումային ընկերությունը կարող է հաշվեգրել ֆակտորինգային գործառնության գծով եկամուտներ միայն այն դեպքում, եթե դրանց հավաքագրումը հավանական է համարում: Հակառակ դեպքում եկամուտ ճանաչվում է գումարը հավաքագրելիս՝

Դտ- 1761

Կտ- 6200 «Ֆակտորինգային գործառնությունների գծով բանկերից ստացվելիք գումարներ»:

1762 «Ռեզիդենտ բանկերի հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք տոկոսներ»- այս հաշիվը նախատեսված է այն դեպքերի համար, երբ բացի զեղչատոկոսից, վարկային կազմակերպությունը ստանում է նաև տոկոսներ:

Ֆակտորինգային գործառնությունից ստացվելիք տոկոս հաշվեգրելիս ձևակերպվում է՝

Դտ- 1762

Կտ- 6200 «Ֆակտորինգային գործառնությունների գծով բանկերից ստացվելիք գումարներ»:

Այս բաժնի մյուս հաշիվների հաշվառումը տարվում է նույն ձևով, ինչ-որ 1760, 1761, 1762 հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 178
«Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեզրկման պահուստ»

1780 «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեզրկման պահուստ»- հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 39-ով սահմանված սկզբունքների համաձայն:

Արժեզրկման պահուստին հատկացումներ կատարվում են՝ հիմք ընդունելով ներդրումների փոխհատուցվող գումարը: Այն սահմանվում է համաձայն ՀՀՀՀՍ 39 ստանդարտի՝ որպես հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությունը:

Հաշիվը կրեդիտագրվում է ակտիվների արժեզրկման նախանշանի առկայության դեպքում դրանց փոխհատուցվող գումարի և հաշվեկշռային արժեքի տարբերության չափով՝

Դտ-7310 «Մինչև մարման ժամկետը պահվող և այլ կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ներդրումների արժեզրկումներից կորուստ»

Կտ- 1780:

Հաշիվը դեբետագրվում է՝

ա) ներդրումների ածեզրկման կորուստի վերականգնման դեպքում՝

Դտ -1780

Կտ -6280 «Մինչև մարման ժամկետը պահվող և այլ կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ներդրումների գծով կորուստների վերականգնում».

բ) ներդրումների լրիվ արժեզրկման դեպքում՝

ակտիվի հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեզրկման պահուստի» հաշվին՝

Դտ -1780

Կտ -Համապատասխան ներդրման հաշիվ:

ԲԱԺԻՆ 18
«Պահանջներ բանկերի և այլ կազմակերպությունների նկատմամբ»

Բաժին 18-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 180 «Ավանդներ», 181;182 «Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր (փոխատվություններ)», 183;184 «Այլ անձանց տրված վարկեր (փոխատվություններ)», 185 «Դեպոնցված միջոցներ»:

Հաշվառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՀՀՀՀՍ), Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված այլ իրավական ակտերի հիման վրա: Բաժնում ընդգրկված հաշիվներն ակտիվային են՝ դեբետում ցույց են տրվում բանկերի և այլ կազմակերպությունների նկատմամբ ներդրումային ընկերության պահանջների աճը, իսկ կրեդիտում՝ դրանց նվազումը: 185 «Դեպոնացված միջոցներ» ենթաբաժնում արտացոլվում են բանկերում կամ այլ ֆինանսական կազմակերպություններում դեպոնացված (սառեցված) գումարները:

Արտարժույթով արտահայտված միջոցները վերագնահատվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքով՝ համաձայն ՀՀՀՀՍ 21-ի:

ԲԱԺԻՆ 19
«Ներդրումային ծառայությունների գծով ստացվելիք գումարներ»

Այս բաժինը բաղկացած է 190;191 «Ներդրումային ծառայությունների գծով ստացվելիք գումարներ» ենթաբաժնից:

Ենթաբաժին 190;191
«Ներդրումային ծառայությունների գծով ստացվելիք գումարներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից արժեթղթերի փաթեթի կառավարման գործառնություններից ստացվելիք միջնորդավճարների և այլ գումարների հաշվառման համար: Ներդրումային ընկերության կողմից կառավարվող ակտիվները չեն գրանցվում այս հաշիվների տակ, քանի որ դրանք ներդրումային ընկերության սեփականությունը չեն հանդիսանում:

1900 «Արժեթղթերի փաթեթի կառավարման գծով ռեզիդենտների գծով ստացվելիք միջնորդավճարներ»- այս հաշվում հաշվառվում են ռեզիդենտներից ստացվելիք գումարները (միջնորդավճարները)՝ նրանց մատուցված արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայությունների համար:

Հաշիվը դեբետագրվում է ստանալիք գումարները (տոկոսներ, միջնորդավճարներ կամ տուգանքներ) հաշվեգրելիս՝

Դտ- 1900

Կտ- 6240 «Եկամուտներ արժեթղթերի փաթեթի կառավարման գծով ռեզիդենտների գծով ստացվելիք միջնորդավճարներից»

Հաշիվը կրեդիտագրվում է հաշվեգրած գումարները հավաքագրելիս՝

Դտ- Դրամական միջոցներ

Կտ- 1900:

Այս բաժնի ենթաբաժինների մյուս հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1900 հաշվի դեպքում:

ԲԱԺԻՆ 20
«Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 200 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ», 201 «Ֆինանսական վարձակալության դիմաց չվաստակած ֆինանսական եկամուտներ»:

Ենթաբաժին 200
«Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ ֆինանսական վարձակալության հաշվառման համար: Հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՀՀՍ 17 «Վարձակալություն» ստանդարտի:

2000 «Ստացվելիք գումարներ ռեզիդենտ բանկերին տրամադրված ֆինանսական վարձակալությունից» հաշիվը նախատեսված է ռեզիդենտ բանկերին տրամադրված ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարները հաշվառելու համար:

Հաշիվը դեբետագրվում է հիմնական միջոցները ֆինանսական վարձակալությամբ ռեզիդենտ բանկերին տրամադրելիս՝

Դտ-2000

Կտ-6000 կարգի համապատասխան հաշիվները (ակտիվի իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի տարբերության չափով)

Կտ- ակտիվի համապատասխան հաշիվները

Կտ- 201 ենթաբաժնի համապատասխան հաշիվները:

Հաշիվը կրեդիտագրվում է ռեզիդենտ բանկերին տրամադրված ֆինանսական վարձակալության գծով լրիվ կամ մասնակի վճարում ստանալիս՝

Դտ- Դրամական միջոց

Կտ- 2000:

Ենթաբաժնի մյուս հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 2000 հաշվի դեպքում:

Ենթաբաժին 201
«Ֆինանսական վարձակալության դիմաց չվաստակած ֆինանսական եկամուտներ»

Այս ենթաբաժնում հաշվառվում են ֆինանսական վարձակալությամբ տրամադրված ակտիվի դիմաց վարձավճարների վճարման գծով ստացվելիք գումարների և իրական արժեքի տարբերության չափով գումարները: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 17-ի համաձայն: Հաշիվը ակտիվին հակակշիռ է և պետք է ունենա կրեդիտային մնացորդ:

Հաշիվը կրեդիտագրվում է ակտիվը ֆինանսական վարձակալության տրամադրման ժամանակ՝

Դտ- 200 ենթաբաժնի համապատասխան հաշիվը

Կտ-6000 կարգի համապատասխան հաշիվը (ակտիվի իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի տարբերության չափով)

Կտ- ակտիվի համապատասխան հաշիվը

Կտ- 201 ենթաբաժնի համապատասխան հաշիվը:

Հաշիվը դեբետագրվում է չստացված ֆինանսական եկամուտները եկամուտներին պարբերաբար հաշվեգրելու ժամանակ՝

Դտ- 201 ենթաբաժնի համապատասխան հաշիվը

Կտ- 6000 կարգի համապատասխան հաշիվը:

ԲԱԺԻՆ 21
«Երաշխիքներ»

Այս բաժինը ներառում է 210; 211 «Երաշխիքներ» ենթաբաժինը:

Ենթաբաժին 210;211
«Երաշխիքներ»

2100 «Երաշխիքներով կատարված վճարումներ ռեզիդենտ բանկերի համար» - այս հաշվում հաշվառվում են ներդրումային ընկերության կողմից ռեզիդենտ բանկերի համար տրված երաշխիքների դիմաց կատարված վճարումները: Երաշխիքների հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» 37-ի համաձայն:

Հաշիվը դեբետագրվում է տրված երաշխիքների դիմաց վճարում կատարելիս՝

Դտ- 2100

Կտ- Դրամական միջոցներ:

Հաշիվը կրեդիտագրվում է՝

ա) վճարված գումարի դիմաց փոխհատուցում ստանալիս՝

Դտ- Դրամական միջոցներ

Կտ- 2100.

բ) տրված անհուսալի երաշխիքները հաշվեկշռից դուրս գրելիս՝

Դտ- Ակտիվների հնարավոր կորուստների դուրսգրման պահուստների հաշիվներ

Կտ – 2100:

2101 «Ստացվելիք վճարներ ռեզիդենտ բանկերի համար տրված երաշխիքների գծով»- այս հաշվում հաշվառվում են ներդրումային ընկերության կողմից ռեզիդենտ բանկերի համար տրված երաշխիքների դիմաց ստացվելիք վճարները:

Հաշիվը դեբետագրվում է ստացվելիք վճարների գումարի չափով՝

Դտ- 2101

Կտ- 6210 «Երաշխիքներից ստացվելիք գումարներ բանկերից»:

Հաշիվը կրեդիտագրվում է վճարներն ստանալիս՝
Դտ- Դրամական միջոցներ, հաճախորդ ներդրումային ընկերության բանկային հաշիվ
Կտ- 2101:

ԲԱԺԻՆ 22
«Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 220 «Դեբիտորական պարտքեր», 221 «Կանխավճարներ աշխատակիցներին և մատակարարներին» 222 «Կանխավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով», 223 «Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստ», 224 «Ապագա ժամանակաշրջանի ծախսեր», 225 «Հաշվարկներ ներդրումային ընկերության և իր մասնաճյուղերի միջև»:
Այս բաժնի բոլոր հաշիվները, բացառությամբ 223 «Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ծածկման պահուստ» ենթաբաժնի հաշիվների, ակտիվային են՝ դեբետում ցույց է տրվում ներդրումային ընկերության ունեցած պահանջների ավելացումը, իսկ կրեդիտում՝ դրանց նվազումը:,
Ըստ ՀՀՀՀՍ 21-ի՝ այս հաշիվների արտարժութային մնացորդները վերագնահատվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանվող հաշվարկային փոխարժեքով:

Ենթաբաժին 220
«Դեբիտորական պարտքեր»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են բյուջեի և այլ ռեզիդենտ ու ոչ ռեզիդենտ անձանց նկատմամբ դեբիտորական պարտքերի հաշվառման համար:

2200 «Դեբիտորական պարտքեր բյուջեի նկատմամբ»- այս հաշվում հաշվառում են բյուջեի նկատմամբ դեբիտորական պարտքերն այն գործառնությունների գծով, որոնց համար առանձին հաշիվներ նախատեսված չեն:

2201 «Դեբիտորական պարտքեր ռեզիդենտների նկատմամբ»- այս հաշվում հաշվառվում են ռեզիդենտներից ստացվելիք գումարները:

2202 «Դեբիտորական պարտքեր ոչ ռեզիդենտների նկատմամբ»- այս հաշվում հաշվառվում են ոչ ռեզիդենտներից ստացվելիք գումարները:

Ենթաբաժին 221
«Կանխավճարներ աշխատակիցներին և մատակարարներին»

2210 «Կանխավճարված աշխատավարձ»- այս հաշվում հաշվառվում է ներդրումային ընկերության աշխատակիցներին կանխավճարային կարգով վճարված աշխատավարձը:
Հաշիվը դեբետագրվում է կանխավճարը տալիս՝
Դտ- 2210
Կտ- Դրամական միջոցներ:
Կանխավճարված աշխատավարձի գծով դեբիտորական պարտքը հաշվարկված աշխատավարձի հետ մարելիս՝
Դտ-3510 «Հիմնական աշխատողներին վճարվելիք աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ», 3511«Պայմանագրային աշխատողներին վճարվելիք աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ »
Կտ- 2210:

2211 «Ներդրումային ընկերության աշխատակիցներին տրված առհաշիվ գումարներ»- այս հաշվում հաշվառվում են ներդրումային ընկերության աշխատակիցներին առհաշիվ տրված այնպիսի գումարները, ինչպիսիք են՝ գործուղումների հետ կապված կանխավճարները, վճարներն ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար և այլն:
Հաշիվը դեբետագրվում է առհաշիվ գումարներ տրամադրելիս՝
Դտ- 2211
Կտ- Դրամական միջոցներ:

Հաշիվը կրեդիտագրվում է առհաշիվ տրված գումարի օգտագործման վերաբերյալ հաշվետվություն ստանալիս:
2211 հաշվի գումարը դուրս է գրվում այն հաշիվների վրա, որոնց գծով օգտագործվել են այդ միջոցները՝

Դտ- Ծախսեր, ակտիվային հաշիվներ և պասիվային հաշիվներ
Կտ- 2211:

2212 «Կանխավճարներ ռեզիդենտ մատակարարներին»- այս հաշվում հաշվառվում են ռեզիդենտներին ապրանքների և ծառայությունների համար տրված կանխավճարները: Ապրանքների ստացման կամ ծառայությունների մատուցման դեպքում կանխավճարներն այս հաշվից փոխանցվում են համապատասխան ակտիվի կամ ծախսի հաշիվ:

Հաշիվը դեբետագրվում է կանխավճար տալիս՝
Դտ- 2212
Կտ- Դրամական միջոցներ:

Հաշիվը կրեդիտագրվում է համապատասխան ապրանքները կամ ծառայությունները ստանալիս՝
Դտ- Ծախսեր, ակտիվային հաշիվներ
Կտ- 2212:

2213 «Կանխավճարներ ոչ ռեզիդենտ մատակարարներին»- այս հաշվում հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 2112 հաշվի դեպքում:

Ենթաբաժին 222
«Կանխավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են շահութահարկի, եկամտահարկի, ավելացված արժեքի հարկի, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովագրության գծով վճարված կանխավճարների հաշվառման համար:

2220 «Կանխավճարներ շահութահարկի գծով»- այս հաշվում հաշվառում են շահութահարկի գծով բյուջեին վճարված կանխավճարները:

Կանխավճար կատարելիս ձևակերպվում է՝
Դտ- 2220
Կտ- Դրամական միջոցներ:

Պարտավորության ժամկետը լրանալիս կանխավճարները դուրս են գրվում այս հաշվից՝ թղթակցելով պարտավորությունների համապատասխան հաշվի հետ՝
Դտ-3500 «Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով»
Կտ- 2220:

2221 «Կանխավճարներ ավելացված արժեքի հարկի գծով»- այս հաշվում հաշվառում են ավելացված արժեքի հարկի գծով բյուջեին վճարված կանխավճարները: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 2220 հաշվի դեպքում:

2222 «Այլ կանխավճարված հարկեր և տուրքեր»- այս հաշվում հաշվառում են այլ հարկերի և տուրքերի գծով բյուջեին վճարված կանխավճարները: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 2220 հաշվի դեպքում:

2223 «Կանխավճարներ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով»- այս հաշվում հաշվառում են պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով կատարված կանխավճարները: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 2220 հաշվի դեպքում:

Ենթաբաժին 223

«Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստ»

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները կոնտրակտիվային են և ցույց են տրվում բացասական նշանով: Հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՀՀՍ 39-ի և ՀՀ ԿԲ կողմից սահմանված համապատասխան կարգի:

Ենթաբաժին 224
«Ապագա ժամանակաշրջանի ծախսեր»

Այս ենթաբաժինը բաղկացած է 2240 «Ապագա ժամանակաշրջանի ծախսեր» հաշվից:

2240 «Ապագա ժամանակաշրջանի ծախսեր»- այս հաշվում գրանցվում են այն գումարները, որոնք նախապես վճարվում են ապագա ժամանակաշրջանում մատուցվելիք ծառայությունների դիմաց: Այս հաշվում հաշվառվում են նաև ներգրաված միջոցների դիմաց պայմանագրով սահմանված ժամկետից շուտ վճարվող (կանխավճարվող) տոկոսագումարները: Ծառայությունները մատուցվելուց այս հաշվի գումարները կրեդիտագրվում են 7000 կարգի համապատասխան հաշիվներին:
Հաշիվը դեբետագրվում է ապագա ժամանակաշրջանի ծախսի չափով՝
Դտ 2240
Կտ Դրամական միջոց:
Հաշիվը կրեդիտագրվում է ապագա ժամանակաշրջանում ճանաչված ծախսի չափով՝
Դտ Համապատասխան ծախսային հաշիվ
Կտ 2240:

Ենթաբաժին 225
«Հաշվարկներ ներդրումային ընկերության և իր մասնաճյուղերի միջև»

Այս ենթաբաժնում հաշվառվում են այն գումարները, որոնք առաջանում են ներդրումային ընկերության և մասնաճյուղերի միջև փոխադարձ հաշվարկների արդյունքում: Հաշվետվությունը ներկայացնելու կամ հրապարակելու ժամանակ այս հաշիվը ենթակա է զրոյացման: Զրոյացման արդյունքում առաջացած մնացորդը դասակարգվում է համապատասխան հաշիվներին: Եթե դա անհնար է, ապա անհրաժեշտ է առաջացած մնացորդը գրանցել 231 «Ստացվելիք այլ գումարներ» ենթաբաժնի հաշիվների վրա: Հաջորդ օրը մնացորդը վերականգնվում է սույն ենթաբաժնի հաշիվներին:

ԲԱԺԻՆ 23
«Ստացվելիք գումարներ»

Այս բաժինը ներառում է 230 «Ստացվելիք շահաբաժիններ», 231 «Ստացվելիք այլ գումարներ» ենթաբաժինները:

Ենթաբաժին 230
«Ստացվելիք շահաբաժիններ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են կապակցված (ասոցիացված, համատեղ կամ դուստր) կազմակերպություններում ներդրումներից ստանալիք շահաբաժինների հաշվառման համար:

<u>Ներդրումները հաշվառման ինքնարժեքի մեթոդի դեպքում</u>

230 «Ստացվելիք շահաբաժիններ» ենթաբաժնի հաշիվները դեբետագրվում են ստացվելիք շահաբաժինները հայտարարելուց հետո՝
Դտ- 230 «Ստացվելիք շահաբաժիններ» ենթաբաժնի հաշիվներ
Կտ- 6230 «Եկամուտ շահաբաժիններից»
230 «Ստացվելիք շահաբաժիններ» ենթաբաժնի հաշիվները կրեդիտագրվում են շահաբաժիններն ստանալիս՝

Դտ- Դրամական միջոցներ
Կտ- 230 «Ստացվելիք շահաբաժիններ» ենթաբաժնի հաշիվներ:

Ներդրումները հաշվառման բաժնեմասնակցության մեթոդի դեպքում

230 «Ստացվելիք շահաբաժիններ» ենթաբաժնի հաշիվները դեբետագրվում են ստացվելիք շահաբաժինները հայտարարելուց հետո՝
Դտ- «Ստացվելիք շահաբաժիններ» ենթաբաժնի հաշիվներ
Կտ- Համապատասխան ներդրման հաշիվ
230 «Ստացվելիք շահաբաժիններ» ենթաբաժնի հաշիվները կրեդիտագրվում են շահաբաժինները ստանալիս՝
Դտ - Դրամական միջոցներ
Կտ- 230 «Ստացվելիք շահաբաժիններ» ենթաբաժնի հաշիվներ:

Ենթաբաժին 231
«Ստացվելիք այլ գումարներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են այլ ստացվելիք գումարների հաշվառման համար:
Ստացվելիք գումարները հաշվեգրելիս դեբետագրվում են 231 ենթաբաժնի հաշիվները և կրեդիտագրվում՝ տվյալ գործարքի գծով թղթակցող հաշիվները:
Վճարումն ստանալիս տրվում է՝
Դտ- Դրամական միջոցներ
Կտ- 231 «Ստացվելիք այլ գումարներ» ենթաբաժնի հաշիվներ:

2315 «Ստացվելիք այլ գումարների զեղչատոկոս»- հաշիվը նախատեսված է ստացվելիք այլ գումարների զեղչատոկոսը հաշվառելու համար:
Հաշիվը կրեդիտագրվում է ստացվելիք այլ գումարների գծով ստացվելիք զեղչատոկոսի գումարի չափով՝
Դտ-231«Ստացվելիք այլ գումարներ» ենթաբաժնի հաշիվներ
Կտ-2315:

ԲԱԺԻՆ 24
«Հեջավորման ածանցյալ գործիքներ»

Այս բաժինը բաղկացած է 240; 241 «Հեջավորման ածանցյալ գործիքներ» ենթաբաժնից, որի հաշիվները նախատեսված են հեջավորման ածանցյալ գործիքների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 32-ի, ՀՀՀՀՍ 39-ի և դրանց հաշվառումը կարգավորող կարգերի համաձայն:

ԲԱԺԻՆ 25
«Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալներում»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 250 «Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալներում», 251 «Ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալներում», 252 «Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումների արժեզրկման պահուստ»:
Այս բաժնում հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 27 «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և դուստր ընկերություններում ներդրումների հաշվառում», ՀՀՀՀՍ 28 «Ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հաշվառում», ՀՀՀՀՍ 31 «Համատեղ ձեռնարկումներում մասնակցության արտացոլումը ֆինանսական հաշվետվություններում» և ՀՀՀՀՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտների համաձայն:

Ըստ ՀՀՀՀՍ 21-ի՝ այս հաշիվների արտարժութային մնացորդները վերագնահատվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանվող հաշվարկային փոխարժեքով:

Ենթաբաժին 250
«Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալներում»

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները նախատեսված են կապակցված կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների հաշվառման համար:

Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառման դեպքում ներդրումը սկզբնապես գրանցվում է ինքնարժեքով (ձեռքբերման արժեքով), իսկ հետո ճշգրտվում է ձեռքբերումից հետո կապակցված կազմակերպության զուտ ակտիվներում ներդրումային ընկերության բաժնեմասի փոփոխությունների չափով: Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում է կապակցված կազմակերպության գործունեության արդյունքներում ներդրումային ընկերության բաժնեմասը:

Հաշիվը դեբետագրվում է կապակցված կազմակերպություններում ներդրումը կատարելիս՝

Դտ- 250

Կտ- Դրամական միջոցներ:

Եթե ներդրումը ձեռք է բերվել այլ ակտիվների կամ ներդրումային ընկերության բաժնետոմսերի փոխանակման միջոցով՝

Դտ-250

Կտ- Այլ ակտիվներ, 500 «Կանոնադրական կապիտալ»:

Ձեռքբերման ամսաթվից հետո կապակցված կազմակերպության շահույթի կամ վնասի ներդրումային ընկերության բաժնեմասը գրանցվում է 250-251ենթաբաժնի հաշիվներին՝

ա) Դտ- 250

Կտ- 623 «Եկամուտ այլ կազմակերպություններում ներդրումներից» բաժնի հաշիվներ

կամ

բ) Դտ- 623 «Եկամուտ այլ կազմակերպություններում ներդրումներից» բաժնի հաշիվներ

Կտ- 250

Այս ներդրումների արժեզրկման հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտի համաձայն:

Ենթաբաժին 251
«Ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալներում»

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները նախատեսված են կապակցված կազմակերպություններում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումների հաշվառման համար:

Ինքնարժեքի մեթոդի կիրառման դեպքում ներդրումը գրանցվում է ինքնարժեքով (ձեռքբերման արժեքով): Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներդրումներից եկամուտներն արտացոլվում են միայն այն չափով, որքանով որ ներդրումային ընկերությունն շահաբաժին է ստանում ներդրման օբյեկտի՝ ձեռքբերման ամսաթվից հետո կուտակված չբաշխված զուտ շահույթից:

Հաշիվը դեբետագրվում է կապակցված կազմակերպություններում ներդրում կատարելիս, ձեռքբերման արժեքով՝

Դտ- 251

Կտ- Դրամական միջոցներ:

Եթե ներդրումը ձեռք է բերվել այլ ակտիվների կամ ներդրումային ընկերության բաժնետոմսերի փոխանակման միջոցով՝

Դտ- 251

Կտ- Այլ ակտիվներ, 50 «Կապիտալ»:

Կապակցված կազմակերպության կողմից շահաբաժինները հայտարարելուց հետո դրանք գրանցվում են 230 «Ստացվելիք շահաբաժիններ» հաշիվներում:

Այս ներդրումների արժեզրկման հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտի համաձայն:

Ենթաբաժին 252
«Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումների արժեզրկման պահուստ»

2520 «Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումների արժեզրկման պահուստ»- ՀՀՀՀՍ 36 ստանդարտի համաձայն: Պահուստին հատկացումներ կատարվում են՝ հիմք ընդունելով ներդրումների փոխհատուցվող գումարը: Այն սահմանվում է որպես ներդրման վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնը:

Հաշիվը կրեդիտագրվում է ինվեստիցիոն արժեթղթերի արժեզրկման նախանշանի առկայության դեպքում արժեթղթերի փոխհատուցվող գումարի և հաշվեկշռային արժեքի տարբերության չափով՝

Դտ- 7310 «Մինչև մարման ժամկետը պահվող և այլ կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ներդրումների արժեզրկումներից կորուստ»

Կտ- 2520:

Հաշիվը դեբետագրվում է՝

ա) արժեզրկումից կորուստի վերականգնման դեպքում՝

Դտ -2520

Կտ-6282 «Մինչև մարման ժամկետը պահվող և այլ կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ներդրումների գծով կորուստների վերականգնում».

բ) լրիվ արժեզրկման դեպքում՝

Ներդրման հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում «Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումների արժեզրկման պահուստի» հաշվին: Ընդ որում, նախ՝ դուրս է գրվում ներդրման գծով առկա գուդվիլը (եթե այդպիսին գոյություն ունի), ապա՝ ներդրման արժեքը»՝

Դտ -2520

Կտ -Համապատասխան ներդրման հաշիվ:

ԲԱԺԻՆ 26
«Ոչ նյութական ակտիվներ և հիմնական միջոցներ»

Բաժինը ներառում է 260 «Ոչ նյութական ակտիվներ», 261 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա», 262 «Հիմնական միջոցներ», 263 «Հիմնական միջոցների ամորտիզացիա», 264 «Շահագործումից դուրս հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ», 265 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում», 266 «Շահագործումից դուրս հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում», 267 «Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում», 268 «Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումներ», 269 «Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումների ամորտիզացիա» ենթաբաժինները:

Ենթաբաժին 260
«Ոչ նյութական ակտիվներ»

2600 «Համակարգչային ծրագրեր»- հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության կողմից ձեռք բերված կամ մշակված համակարգչային ծրագրերի գծով կատարված ծախսումները հաշվառելու համար: Համակարգչային ծրագրերի գծով կատարված ծախսումները հաշվեկշռում

ճանաչվում են որպես ակտիվ և պարբերաբար դուրս են գրվում (ամորտիզացվում են) հաշվարկված օգտակար տևողության ընթացքում:

2601 «Լիցենզիաներ և վստահագրեր»- հաշիվը նախատեսված է լիցենզիաների և վստահագրերի ձեռքբերման նպատակով ներդրումային ընկերության կատարած ծախսումների հաշվառման համար: Նշված ծախսումները հաշվեկշռում ճանաչվում են որպես ակտիվ և պարբերաբար դուրս են գրվում (ամորտիզացվում են) հաշվարկված օգտակար տևողության ընթացքում:

2602 «Հեղինակային իրավունքներ» -հաշիվը նախատեսված է հեղինակային իրավունքների ձեռքբերման նպատակով ներդրումային ընկերության կատարած ծախսումների հաշվառման համար: Նշված ծախսումները հաշվեկշռում ճանաչվում են որպես ակտիվ և պարբերաբար դուրս են գրվում (ամորտիզացվում են) հաշվարկված օգտակար տևողության ընթացքում:

2603 «Այլ ոչ նյութական ակտիվներ»-այս հաշվում հաշվառվում են այն ոչ նյութական ակտիվները, որոնց հաշվառման համար առանձին հաշիվներ նախատեսված չեն:

Ենթաբաժին 261
«Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա »

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են 260 «Ոչ նյութական ակտիվներ» ենթաբաժնի ակտիվների ամորտիզացիայի (մաշվածքի) գումարները հաշվառելու համար: Հաշիվները հակակշռային են: Հաշիվների կրեդիտում գրանցվում են ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսերի կուտակումները:

Ենթաբաժին 262
«Հիմնական միջոցներ»

2620 «Հող» - այս հաշվում հաշվառվում են ներդրումներ հողում, սովորաբար՝ շինարարական նպատակներով:

Հաշիվը դեբետագրվում է հողի ձեռքբերման դեպքում՝ գնման գնի և հողի վերագնահատման արդյունքում՝ հողի իրական և հաշվեկշռային արժեքների դրական տարբերության չափով:

Հաշիվը կրեդիտագրվում է հողի օտարման դեպքում՝ հաշվեկշռային արժեքի չափով և հողի վերագնահատման արդյունքում՝ հողի իրական և հաշվեկշռային արժեքների բացասական տարբերության չափով:

2621 «Շենքեր, շինություններ»- այս հաշվում հաշվառվում են ներդրումային ընկերության շենքերում (տարածքում) կատարված ընդհանուր ներդրումները:

Հաշիվը դեբետագրվում է շենքի և շինությունների ձեռքբերման և հետագայում դրանց օգտակար ծառայությունն ավելացնելու համար կապիտալ ներդրումների կատարման դեպքում: Հաշիվը դեբետագրվում է նաև շենքի և շինությունների վերագնահատման արդյունքում՝ շենքի և շինությունների իրական հաշվեկշռային արժեքների դրական տարբերության չափով:

Հաշիվը կրեդիտագրվում է շենքի և շինությունների օտարման և դուրսգրման դեպքում: Հաշիվը կրեդիտագրվում է նաև շենքի և շինությունների վերագնահատման արդյունքում՝ դրանց իրական հաշվեկշռային արժեքների բացասական տարբերության չափով:

2622 «Գույք և գրասենյակային սարքավորումներ»-այս հաշվում հաշվառվում են ներդրումային ընկերության գործունեության համար օգտագործվող գույքի և գրասենյակային սարքավորումների (օրինակ՝ սեղան, աթոռ, պահարան, բազկաթոռ, դարակաշար, չհրկիզվող պահարան և այլն) համար կատարված ներդրումները:

Հաշիվը դեբետագրվում է գույքի և գրասենյակային սարքավորումների ձեռքբերման և հետագայում դրանց օգտակար ծառայությունը երկարացնելու ու բարելավելու համար կապիտալ ներդրումների կատարման դեպքում, ինչպես նաև գույքի ու գրասենյակային սարքավորումների վերագնահատման արդյունքում համախառն հաշվեկշռային արժեքի ավելացման չափով:

Հաշիվը կրեդիտագրվում է գույքի և գրասենյակային սարքավորումների օտարման ու դուրսգրման և գույքի ու գրասենյակային սարքավորումների վերագնահատման արդյունքում համախառն հաշվեկշռային արժեքի նվազման չափով:

2623 «Կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկա»- այս հաշվում հաշվառվում են ներդրումային ընկերության գործունեության համար օգտագործվող համակարգիչների և հաղորդակցման սարքավորումների համար կատարված ներդրումները:

Հաշիվը դեբետագրվում է կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկա ձեռք բերելու և հետագայում դրանց օգտակար ծառայությունն ավելացնելու համար կապիտալ ներդրումների կատարման դեպքում: Հաշիվը դեբետագրվում է նաև նշված ներդրումների վերագնահատման արդյունքում համախառն հաշվեկշռային արժեքի ավելացման չափով:

Հաշիվը կրեդիտագրվում է կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկայի օտարման և դուրսգրման դեպքում: Հաշիվը կրեդիտագրվում է նաև նշված ներդրումների վերագնահատման արդյունքում համախառն հաշվեկշռային արժեքի նվազման չափով:

2624 «Փոխադրամիջոցներ»- այս հաշվում հաշվառվում են ներդրումային ընկերության գործունեության համար օգտագործվող փոխադրամիջոցների համար կատարված ներդրումներ:

Հաշիվը դեբետագրվում է փոխադրամիջոցների ձեռքբերման և հետագայում դրանց օգտակար ծառայությունը ավելացնելու համար կապիտալ ներդրումների կատարման դեպքում: Հաշիվը դեբետագրվում է նաև փոխադրամիջոցների վերագնահատման արդյունքում համախառն հաշվեկշռային արժեքի ավելացման չափով:

Հաշիվը կրեդիտագրվում է փոխադրամիջոցների օտարման և դուրսգրման, ինչպես նաև փոխադրամիջոցների վերագնահատման արդյունքում համախառն հաշվեկշռային արժեքի նվազման չափով:

2625 «Այլ հիմնական միջոցներ»-այս հաշվում հաշվառվում են ներդրումային ընկերության գործունեության համար օգտագործվող այն հիմնական միջոցների համար կատարված ներդրումները, որոնց համար առանձին հաշիվներ նախատեսված չեն:

2626 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ»- այս հաշվում հաշվառվում են ներդրումային ընկերության կողմից վարձակալության վերցված հիմնական միջոցները: Ակտիվի արժեքը պարբերաբար դուրս է գրվում (ամորտիզացվում է) կամ ակտիվի օգտակար տնողության, կամ վարձակալության տնողության ընթացքում (ներառելով ցանկացած հնարավոր վերականգնման ժամանակաշրջան, որի ընթացքում վարձակալությունը կնորացվի)՝ կախված նրանից, թե որ ժամկետն է ավելի կարճ, և արդյոք ներդրումային ընկերությունը հնարավորություն կունենա ձեռք բերել տվյալ ակտիվը վարձակալության ժամկետը լրանալուց հետո: Երբ վարձակալության ժամկետը ավարտվում է, ակտիվի սեփականության իրավունքը փոխանցվում է վարձակալող ներդրումային ընկերությանը կամ վերադարձվում է վարձատուին:

Հաշիվը դեբետագրվում է հիմնական միջոցների վարձակալության վերցման դեպքում՝

Դտ- 2626

Կտ-374 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ» ենթաբաժնի համապատասխան հաշիվներ:

Հաշիվը դեբետագրվում է նաև վարձակալության վերցված հիմնական միջոցների վերագնահատման, նաև դրանցում կապիտալ ներդրումների կատարման դեպքում:

Վարձակալության վերցված հիմնական միջոցների գնման դեպքում հաշիվը կրեդիտագրվում է՝

Դտ-Հիմնական միջոցներ

Կտ-2626:

Ենթաբաժին 263
«Հիմնական միջոցների ամորտիզացիա»

Հաշիվների այս ենթաբաժնում հաշվառվում են հիմնական միջոցների ամորտիզացիայի գումարները: Հիմնական միջոցների ամորտիզացիան կատարվում է դրանց օգտակար ծառայության ընթացքում՝ ներդրումային ընկերության կողմից ընտրված մեթոդով: Հաշիվների կրեդիտում գրանցվում են հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսերի կուտակումները:

Ենթաբաժին 264
«Շահագործումից դուրս հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ»

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները նախատեսված են ծառայությունից դուրս գտնվող և/կամ օտարման ենթակա հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվառման համար: Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ծառայությունից դուրս գալու ժամանակ ակտիվի մնացորդային արժեքի չափով այս հաշիվները դեբետագրվում են՝

Ծառայությունից դուրս գտնվող ակտիվներն ամորտիզացիայի ենթակա չեն:

Հաշիվները կրեդիտագրվում են դեռևս չշահագործված ակտիվները շահագործման հանձնելիս՝

Դտ - Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Կտ - 264 «Շահագործումից դուրս հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ»:

Հաշիվները կրեդիտագրվում են նաև ծառայությունից դուրս հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարման դեպքում: Օտարման արդյունքում դրանց վաճառքի գնի և դրանց հաշվեկշռային արժեքի միջև եղած տարբերությունը դեբետագրվում/կրեդիտագրվում է ակտիվների օտարումից առաջացող վնասների կամ օգուտների հաշիվներին:

Ենթաբաժին 265
«Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում»

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկման հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտի համաձայն:

Ենթաբաժին 266
«Շահագործումից դուրս հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում»

Շահագործումից դուրս հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկման հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտի համաձայն:

Ենթաբաժին 267
«Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում»

Այս բաժնում հաշվառվում են հիմնական միջոցների ձեռքբերման կամ բարելավման համար կատարված, սակայն դեռևս չկապիտալացված ծախսումները:

2670 «Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում»- այս հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվների բարելավման վրա կատարված ծախսումները հաշվառելու համար:

Կապիտալ ներդրումների գծով ռեզիդենտներին տրամադրված գումարները կատարողական ակտերի հիման վրա վերագրանցվում են որպես կապիտալ ներդրումներ ներդրումային ընկերության հիմնական միջոցներում՝

Դտ- 2670 «Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում»

Կտ- 2212 «Կանխավճարներ ռեզիդենտ մատակարարներին», 2213 «Կանխավճարներ ոչ ռեզիդենտ մատակարարներին»

Հաշիվը կրեդիտագրվում է հիմնական միջոցի օբյեկտը շահագործման հանձնելիս՝

Դտ- Հիմնական միջոցների համապատասխան հաշիվ

Կտ- 2670:

2670 հաշիվն օգտագործվում է նաև առկա հիմնական միջոցների բարելավմանն ուղղվող ծախսերի հաշվառման համար: Բարելավման աշխատանքներն ավարտելուց հետո այդ ծախսումները

կապիտալացվում են՝ ավելացվելով հիմնական միջոցների արժեքին կամ դուրս են գրվում ներդրումային ընկերության ծախսերով: Կատարված ծախսումների կապիտալացման կամ ծախսերով դուրսգրման չափանիշները ներկայացված են ՀՀՀՀՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտում:

2671 «Կապիտալ ներդրումներ ոչ նյութական ակտիվներում»- այս հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության ոչ նյութական ակտիվների բարելավման վրա կատարված ծախսումները հաշվառելու համար: Հաշվառման սկզբունքը նույնն է, ինչ որ 2670 հաշվի դեպքում:

Ենթաբաժին 268
«Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումներ»

2680 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումներ» – այս հաշիվը նախատեսված է ֆինանսական վարձակալության համաձայն վարձակալ ներդրումային ընկերության տրամադրության տակ գտնվող հիմնական միջոցների բարելավման վրա կատարված ծախսումները հաշվառելու համար: Հաշվառման սկզբունքը նույնն է, ինչ որ 2670 հաշվի դեպքում: Բարելավման աշխատանքներն ավարտելուց հետո այդ ծախսումները կապիտալացվում են՝ ավելացվելով ֆինանսական վարձակալությամբ ստացված ակտիվների արժեքին:

2681 «Գործառնական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումներ» - այս հաշիվը ներկայացնում է գործառնական վարձակալության համաձայն վարձակալ ներդրումային ընկերության տրամադրության տակ գտնվող հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումները հաշվառելու համար:

Ենթաբաժին 269
«Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումների ամորտիզացիա»

2690 «Կուտակված ամորտիզացիա - Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումներ» - այս հաշիվը նախատեսված է վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումների ամորտիզացիայի գումարները հաշվառելու համար: Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումները պարբերաբար ամորտիզացվում են կամ դրանց օգտակար ծառայության ժամկետի, կամ վարձակալության տևողության ընթացքում (ներառելով ցանկացած հնարավոր վերականգման ժամանակաշրջան, որի ընթացքում վարձակալությունը կնորացվի)՝ կախված նրանից, թե որ ժամկետն է ավելի կարճ:

ԲԱԺԻՆ 27
«Այլ ակտիվներ»

Այս բաժնում ներառված հաշիվները նախատեսված են ներդրումային ընկերության կողմից բռնագանձված գրավի, հետաձգված հարկային ակտիվների, բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում սառեցված հաշիվների, ինչպես նաև այլ ակտիվների համար, որոնց համար առանձին հաշիվներ նախատեսված չեն:

2700 «Բռնագանձված գրավ-անշարժ գույք»- հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության կողմից տրամադրված և անշարժ գույքով ապահովված վարկերի և փոխատվությունների չմարման դեպքում բռնագանձված գրավի առարկայի հաշվառման համար:

Նշված վարկերն ու փոխատվությունները դուրս են գրվում հաշվեկշռից ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստների հաշիվների միջոցներով, իսկ գրավը ճանաչվում է հաշվեկշռում վերջինիս իրական արժեքի և փոխառուի նկատմամբ պահանջի (ներառյալ գործառնական ծախսերը) նվազագույն մեծությամբ՝ միաժամանակ այդ գումարը ճանաչելով եկամուտ:

Դտ- 2700

Կտ- 626;627 «Օգուտներ»:

Այս հաշվում հաշվառված ակտիվների նկատմամբ ամորտիզացիա չի հաշվարկվում: Գրավը վաճառելիս ներդրումային ընկերությունը տալիս է հետևյալ ձևակերպումները՝

ա) վաճառքի գինը հավասար է գրավի հաշվեկշռային արժեքին՝

Դտ- Դրամական միջոցներ

Կտ- 2700.

բ) վաճառքի գինը բարձր է գրավի հաշվեկշռային արժեքից՝

Դտ- Դրամական միջոցներ

Կտ- 2700

Կտ-3513 «Արտաքին կրեդիտորական պարտքեր ռեզիդենտների նկատմամբ», 3514 «Արտաքին կրեդիտորական պարտքեր ոչ ռեզիդենտների նկատմամբ».

գ) վաճառքի գինը ցածր է գրավի հաշվեկշռային արժեքից՝

Դտ- Դրամական միջոցներ

Դտ- 7313 «Կորուստներ այլ գործառնություններից»

Կտ- 2700:

2701 «Բռնագանձված գրավ- այլ ակտիվներ»- հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 2700 հաշվի դեպքում:

2702 «Հետաձգված հարկային ակտիվներ»- այս հաշիվը նախատեսված է նվազեցվող ժամանակավոր տարբերությունների, չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետևանքով առաջացած շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվառման մոտեցումները նկարագրված են ՀՀՀՀՍ 12 «Շահութահարկ» ստանդարտում:

2703 «Սառեցված հաշիվներ ռեզիդենտների մոտ»- սրանք բանկերում կամ այլ ֆինանսական կազմակերպություններում ունեցած այն միջոցներն են, որոնց օգտագործումը կասեցված է՝ հաշվի արգելադրման կամ այլ պատճառներով:

2704 «Սառեցված հաշիվներ ոչ ռեզիդենտների մոտ»- հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 2703 հաշվի դեպքում:

2705 «Արագամաշ առարկաներ»- հաշվառումը կատարվում է ՀՀՀՀՍ 2-ի համաձայն: Ձեռքբերման պահին արագամաշ առարկաները հաշվեկշռում գրանցվում են ինքնարժեքով՝

Դտ-2705

Կտ- Դրամական միջոցներ:

Հաշիվները կրեդիտագրվում են տնտեսական նյութերը և արագամաշ առարկաներն օգտագործման հանձնելու համար պահեստից դուրս գրելիս՝

Դտ- համապատասխան ծախսի հաշիվ

Կտ- 2705:

2706 «Այլ միջնորդավճարներ»- այս հաշվու արտացոլվում են ներդրումային ընկերության կողմից ստացվելիք միջնորդավճարները, որոնց հաշվառման համար առանձին հաշիվներ նախատեսված չեն:

2707 «Այլ ակտիվներ»- Այս հաշվում հաշվառվում են այն ակտիվները, որոնց համար առանձին հաշիվներ նախատեսված չեն:

ԿԱՐԳ 3 – 4 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱԺԻՆ 30
«Ներգրավված փոխառություններ և վարկեր»

Այս բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ 300; 301 «Ներգրավված ցպահանջ փոխառություններ», 302;303 «Ներգրավված ժամկետային փոխառություններ», 304;305 «Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր»:

Ենթաբաժին 300;301
«Ներգրավված ցպահանջ փոխառություններ»

Այս ենթաբաժինը նախատեսված է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերից այլ ֆինանսական կազմակերպություններից ու այլ անձանցից ներգրաված ցպահանջ փոխառությունների, ինչպես նաև դրանց դիմաց հաշվեգրված տոկոսների հաշվառման համար:

Տոկոսները հաշվեգրելիս այս ենթաբաժնի հաշիվները թղթակցում են 700;701 «Տոկոսային ծախսեր բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված փոխառությունների դիմաց», 702 «Տոկոսային ծախսեր այլ անձանցից ներգրավված փոխառությունների դիմաց» ենթաբաժնի հաշիվների դեբետի հետ:

Ենթաբաժին 302;303
«Ներգրավված ժամկետային փոխառություններ»

Այս ենթաբաժինը նախատեսված է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերից, այլ ֆինանսական կազմակերպություններից, այլ անձանցից ներգրաված ժամկետային փոխառությունների, ինչպես նաև դրանց դիմաց հաշվեգրված տոկոսների հաշվառման համար:

Տոկոսները հաշվեգրելիս այս ենթաբաժնի հաշիվները թղթակցում են 700;701 «Տոկոսային ծախսեր բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված փոխառությունների դիմաց», 702 «Տոկոսային ծախսեր այլ անձանցից ներգրավված փոխառությունների դիմաց» ենթաբաժնի հաշիվների դեբետի հետ:

Ենթաբաժին 304;305
«Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր»

Այս ենթաբաժինը նախատեսված է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի և օվերդրաֆտների, ինչպես նաև դրանց դիմաց հաշվեգրված տոկոսների հաշվառման համար:

Տոկոսները հաշվեգրելիս այս ենթաբաժնի հաշիվները թղթակցում են 703 «Տոկոսային ծախսեր ստացված վարկերի դիմաց» ենթաբաժնի հաշիվների դեբետի հետ:

ԲԱԺԻՆ 31
«Ռեպո համաձայնագրեր»

Այս բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ 310;311 «Ռեպո համաձայնագրեր բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ», 312; 313 «Ռեպո համաձայնագրեր այլ անձանց հետ»:

Ռեպո համաձայնագրերի հաշվառումն իրականացվում է ՀՀՀՀՍ 39-ի սկզբունքներին համապատասխան:

Ենթաբաժին 310;311
«Ռեպո համաձայնագրեր բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ռեպո համաձայնագրերի համաձայն արժեթղթեր վաճառող ներդրումային ընկերության կողմից օգտագործման համար:

3102 «Ռեպո համաձայնագրեր ռեզիդենտ բանկերի հետ»- հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության կողմից ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրի հաշվառման համար:

Ռեպո համաձայնագրի հիման վրա ռեզիդենտ բանկերին արժեթուղթ վաճառող ներդրումային ընկերությունը համաձայնագրի կնքման օրը ձևակերպում է.

1) Դտ-Դրամական միջոցներ
Կտ-3102 «Ռեպո համաձայնագրեր ռեզիդենտ բանկերի հետ» և
2) Դտ-150;151 «Ռեպո համաձայնագրերով բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին վաճառված արժեթղթեր» ենթաբաժնի համապատասխան հաշիվ
Կտ- Արժեթղթեր հաշվառող հաշիվներ:
3) Տոկոսներ հաշվեգրելիս արժեթուղթ վաճառող ներդրումային ընկերությունը ձևակերպում է.
Դտ- 7051 «Տոկոսային ծախսեր ռեզիդենտ բանկերի հետ ռեպո համաձայնագրերի գծով»
Կտ-3103 «Հաշվեգրված տոկոսներ ռեզիդենտ բանկերի հետ ռեպո համաձայնագրերի դիմաց»:
4) Ռեպո համաձայնագրի գործողության ժամկետի ավարտին արժեթուղթ վաճառող ներդրումային ընկերությունն արժեթղթերը հետգնելիս ձևակերպում է.
Դտ- Արժեթղթեր հաշվառող հաշիվներ
Կտ-150;151«Ռեպո համաձայնագրերով բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին վաճառված արժեթղթեր» ենթաբաժնի համապատասխան հաշիվ, և
Դտ-3102 «Ռեպո համաձայնագրեր ռեզիդենտ բանկերի հետ»
Կտ-Դրամական միջոցներ:
5) Տոկոսները վճարելիս ձևակերպվում է.
Դտ-3103 «Հաշվեգրված տոկոսներ ռեզիդենտ բանկերի հետ ռեպո համաձայնագրերի դիմաց»
Կտ-Դրամական միջոցներ:

ԲԱԺԻՆ 32
«Պարտավորություն ռեպո համաձայնագրերի գծով»

Այս բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ 320 «Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ռեպո համաձայանգրերի գծով», 321 «Պարտավորություններ այլ անձանց նկատմամբ ռեպո համաձայնագրերի գծով»:
Ռեպո համաձայնագրերի հաշվառումն իրականացվում է ՀՀՀՀՍ 39-ի սկզբունքներին համապատասխան:

Ենթաբաժին 320
«Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ռեպո համաձայանգրերի գծով»

Ենթաբաժնի հաշիվները նախատեսված են բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրերի համաձայն արժեթուղթ գնած ներդրումային ընկերության կողմից արժեթղթերի վերադարձման պարտավորությունը հաշվառելու համար: Հաշվառման մոտեցումները նկարագրված են 116; 117 «Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր» և 140;141«Ռեպո համաձայնագրեր բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ» ենթաբաժինների մեկնաբանություններում:

ԲԱԺԻՆ 33
«Պարտավորություններ արժութային սվոպի գծով»

Այս բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ 330; 331 «Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ արժութային սվոպի գծով», 332; 333 «Պարտավորություններ այլ անձանց նկատմամբ արժութային սվոպի գծով»:

Ենթաբաժին 330; 331
«Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ արժութային սվոպի գծով»

Այս ենթաբաժնի հաշիվներն օգտագործում է արժութային սվոպով արժույթ գնող ներդրումային ընկերությունն արժույթի հակադարձ վաճառքի պարտավորությունը արտացոլելու համար: Հաշիվը դեբետագրվելիս ցույց է տրվում արժութային սվոպի միջոցով ստացված արժույթի

վերադարձման պարտավորությունը: Այն կրեդիտագրվում է, երբ ներդրումային ընկերությունը հետ է վաճառում սվոպով ձեռք բերված արժույթը: Այս բաժնի հաշիվները թղթակցում են դրամական ակտիվներ բաժնի համապատասխան հաշիվների հետ:

ԲԱԺԻՆ 34
«Ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթեր»

Այս բաժինը ներառում է 340 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթեր»: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 32 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումը և ներկայացումը» և ՀՀՀՀՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում» ստանդարտների սկզբունքներին համապատասխան:

Ենթաբաժին 340
«Ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթեր»

3400 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր»- հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի հաշվառման համար:

Ներդրումային ընկերության կողմից թողարկված զեղչատոկոսային արժեթուղթը հաշվեկշռում գրանցվում է անվանական արժեքով, հետևյալ ձևակերպմամբ՝

Դտ- Դրամական միջոցներ

Դտ- 3401 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս » (անվանական արժեքի և իրացման գնի տարբերության չափով)

Կտ- 3400 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր»:

Հաշիվը դեբետագրվում է թողարկված արժեթղթերի մարման դեպքում՝

Դտ- 3400 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր»

Կտ- Դրամական միջոցներ:

3401 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս»- հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության կողմից թողարկված զեղչատոկոսային արժեթղթերի զեղչի հաշվառման համար:

Զեղչատոկոսի ամորտիզացիան իրականացվում է էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով, հետևյալ ձևակերպմամբ՝

Դտ- 7090 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթերի դիմաց հաշվեգրված տոկոսներ» ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ- 3401 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս »:

3402 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր»- այս հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության կողմից թողարկված տոկոսային եկամուտ ապահովող արժեթղթերի հաշվառման համար:

Ներդրումային ընկերության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերը հաշվեկշռում գրանցվում են իրենց անվանական արժեքով: Եթե արժեթուղթը վաճառվել է զեղչատոկոսով կամ հավելավճարով, ապա վաճառքի գնի ու անվանական արժեքի տարբերության գումարները գրանցվում են, համապատասխանաբար՝ 3403 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս» կամ 3404 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի հավելավճար» հաշիվներում:

Թողարկված տոկոսային արժեթղթերը տեղաբաշխելիս տրվում են հետևյալ ձևակերպումները՝

ա) զեղչատոկոսի դեպքում՝

Դտ- Դրամական միջոցներ

Դտ- 3403 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս»

Կտ- 3402 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր»:

բ) հավելավճարի դեպքում՝

Դտ- Դրամական միջոցներ

Կտ- 3402 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր»

Կտ- 3404 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի հավելավճար»:

Արժեթղթերի մարման դեպքում տրվում են հետևյալ ձևակերպումները՝

Դտ- 3402 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր»

Կտ- Դրամական միջոցներ:

3403 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս»- հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության կողմից թողարկված տոկոսային եկամուտ ապահովող արժեթղթերի զեղչի հաշվառման համար:

Զեղչատոկոսի ամորտիզացիան իրականացվում է էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով, հետևյալ ձևակերպմամբ՝

Դտ- 7090 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթերի դիմաց հաշվեգրված տոկոսներ»

Կտ-3403 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս»:

3404 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի հավելավճար» - հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության կողմից թողարկված տոկոսային եկամուտ ապահովող արժեթղթերի հավելավճարի հաշվառման համար:

Հավելավճարի ամորտիզացիան իրականացվում է էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով, հետևյալ ձևակերպմամբ՝

Դտ- 3404 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի հավելավճար»

Կտ - 7090 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթերի դիմաց հաշվեգրված տոկոսներ»

3405 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի դիմաց հաշվեգրված տոկոսներ» - հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի գծով վճարվելիք տոկոսների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է վճարվելիք տոկոսները հաշվեգրելիս՝

Դտ- 7090 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթերի դիմաց հաշվեգրված տոկոսներ»

Կտ- 3405 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի դիմաց հաշվեգրված տոկոսներ»:

Հաշիվը դեբետագրվում է արժեթղթերի դիմաց տոկոսներ վճարելիս՝

Դտ- 3405 «Ներդրումային ընկերության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի դիմաց հաշվեգրված տոկոսներ»:

Կտ- Դրամական միջոցներ:

ԲԱԺԻՆ 35
«Կրեդիտորական պարտքեր»

Այս բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ 350 «Կրեդիտորական պարտքեր բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով», 351 «Ներքին և արտաքին կրեդիտորական պարտքեր»:

Ենթաբաժին 350
«Կրեդիտորական պարտքեր բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով»

3500 «Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով»- այս հաշիվը նախատեսված է հաշվարկված շահութահարկի գծով ներդրումային ընկերության պարտավորությունների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է հաշվարկված շահութահարկի գումարի չափով՝

Դ-տ- 7500 «Ընթացիկ հարկի գծով ծախս (փոխհատուցում)»

Կտ- 3500 «Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով»

Հաշիվը դեբետագրվում է շահութահարկի գծով պարտավորությունները դուրս գրելիս՝ թղթակցելով 2220 «Կանխավճարներ շահութահարկի գծով» հաշվի հետ՝

Դ-տ- 3500 «Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով»

Կտ- 2220 «Կանխավճարներ շահութահարկի գծով»:

3501 «Կրեդիտորական պարտքեր ավելացված արժեքի հարկի գծով»- այս հաշիվը նախատեսված է հաշվարկված ավելացված արժեքի հարկի գծով ներդրումային ընկերության պարտավորության հաշվառման համար: Այս հաշիվը թղթակցում է այն ակտիվային հաշիվների հետ, որոնց գծով հաշվարկվել է հարկը:

Հաշիվը դեբետագրվում է ԱԱՀ-ի գծով պարտավորությունները դուրս գրելիս՝ թղթակցելով 2321 «Կանխավճարներ ԱԱՀ-ի գծով» հաշվի հետ՝

Դ-տ- 3501 ««Կրեդիտորական պարտքեր ավելացված արժեքի հարկի գծով»»

Կտ- 2221 «Կանխավճարներ ավելացված արժեքի հարկի գծով»:

3502 «Կրեդիտորական պարտքեր այլ հարկերի և տուրքերի գծով»- այս հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության աշխատողների եկամտահարկի, գույքահարկի, հողի հարկի և այլ հարկերի ու տուրքերի գծով բյուջե վճարվելիք գումարների հաշվառման համար:

Եկամտահարկի գծով ձևակերպվում է՝

Դ-տ- 3510 «Հիմնական աշխատողներին վճարվելիք աշխատավարձ», 3511 «Պայմանագրային աշխատողներին վճարվելիք աշխատավարձ»

Կտ- 3502:

Մնացած հարկերի և տուրքերի գծով ձևակերպվում է՝

Դ-տ- 7216 «Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր»

Կտ- 3502:

Հարկերի գծով պարտավորությունները մարելիս՝

Դ-տ- 3502

Կտ- Դրամական միջոցներ:

3503 «Կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով»- հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության աշխատողների աշխատավարձից և ներդրումային ընկերության միջոցներից պարտադիր սոցիալական ապահովագրության գծով վճարվելիք գումարների հաշվառման համար:

Վճարվելիք գումարի չափով տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը՝

Դ-տ- 7204 «Հատկացումներ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով»

Կտ- 3503:

Պարտավորությունները մարելիս՝

Դ-տ- 3503

Կտ- Դրամական միջոցներ:

Ենթաբաժին 351
«Ներքին և արտաքին կրեդիտորական պարտքեր»

3510 «Հիմնական աշխատողներին վճարվելիք աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ»-հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության հիմնական աշխատողներին վճարվելիք աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների գումարների հաշվառման համար:

Վճարվելիք աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների գումարի չափով կատարվում է հետևյալ ձևակերպումը՝

Դտ- 7200 «Հիմնական աշխատողներին տրվող աշխատավարձ»

Դտ- 7202; 7203 (հիմնական աշխատողներին վերաբերվող մասով)

Կտ- 3510:

Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ վճարելիս՝

Դտ-3510

Կտ- Դրամական միջոցներ:

3511 «Պայմանագրային աշխատողներին վճարվելիք աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ»- հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության պայմանագրային աշխատողներին վճարվելիք աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարներ գումարների հաշվառման համար:

Վճարվելիք աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների գումարի չափով կատարվում է հետևյալ ձևակերպումը՝

Դտ- 7201 «Պայմանագրային աշխատողներին տրվող աշխատավարձ»

Դտ - 7202; 7203 (պայմանագրային աշխատողներին վերաբերվող մասով)

Կտ- 3511:

Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ վճարելիս՝

Դտ- 3511

Կտ- Դրամական միջոցներ:

3512 «Այլ ներքին կրեդիտորական պարտքեր»- այս հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության աշխատողների նկատմամբ այլ պարտավորությունների հաշվառման համար:

3513 «Արտաքին կրեդիտորական պարտքեր ռեզիդենտների նկատմամբ»- այս հաշիվը նախատեսված է ապրանքների կամ ծառայությունների դիմաց ռեզիդենտներին վճարվելիք գումարների հաշվառման համար:

3514 «Արտաքին կրեդիտորական պարտքեր ոչ ռեզիդենտների նկատմամբ»- այս հաշիվը նախատեսված է ապրանքների կամ ծառայությունների դիմաց ոչ ռեզիդենտներին վճարվելիք գումարների հաշվառման համար:

3515 «Կրեդիտորական պարտքեր կանոնադրական կապիտալի համալրման գծով ռեզիդենտների նկատմամբ»- հաշիվն օգտագործվում է նոր ստեղծվող ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալի ձևավորման և գործող ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալի համալրման նպատակով՝ մինչև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով կանոնադրական կապիտալի գրանցումը, որից հետո այս հաշիվը փակվում է, իսկ դրանում հաշվառված միջոցներն օգտագործվում են ներդրումային ընկերության հայեցողությամբ:

Հաշիվը դեբետագրվում է կանոնադրական կապիտալի ձևավորման և համալրման դեպքում՝

Դտ- Կանոնադրական կապիտալի համալրման հաշիվ

Կտ- 3515:

Կանոնադրական կապիտալի ձևավորումից կամ համալրումից հետո այս հաշիվը փակվում է:

3516 «Կրեդիտորական պարտքեր կանոնադրական կապիտալի համալրման գծով ոչ ռեզիդենտների նկատմամբ»- տես 3515 «Կրեդիտորական պարտքեր կանոնադրական կապիտալի համալրման գծով ռեզիդենտների նկատմամբ» հաշիվը:

ԲԱԺԻՆ 36
«Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած ֆինանսական ծախսեր»

Ենթաբաժին 360
«Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած ֆինանսական ծախսեր»

Այս ենթաբաժնում հաշվառվում են ֆինանսական վարձակալությամբ վերցված ակտիվի դիմաց վարձավճարների վճարման գծով պարտավորության և իրական արժեքի տարբերությունները: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 17-ի համաձայն: Այս ենթաբաժնի հաշիվները ակտիվային են, կարգավորող և ունեն դեբետային մնացորդ:

Հաշիվը դեբետագրվում է ակտիվը ֆինանսական վարձակալությամբ վերցնելու ժամանակ՝

Դտ- 2626 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ»

Դտ- 360 ենթաբաժնի համապատասխան հաշիվը

Կտ- 374 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ»:

Հաշիվը կրեդիտագրվում է չկրած ֆինանսական ծախսերը ծախսերին պարբերաբար հաշվեգրելու ժամանակ՝

Դտ- 7141 «Տոկոսային ծախսեր ֆինանսական վարձակալության գծով»

Կտ- 360 ենթաբաժնի համապատասխան հաշիվը:

ԲԱԺԻՆ 37
«Այլ պարտավորություններ»

Այս բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ 370 «Վարկեր գանձապետարանից», 371 «Այլ պարտավորություններ կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների և սոցիալական ապահովագրության հիմնադրամի նկատմամբ», 372 «Պարտավորություններ այլ պետությունների կառավարությունների նկատմամբ», 373 «Վճարման ենթակա շահաբաժիններ», 374 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ», 375 «Հետաձգված հարկային պարտավորություններ», 376 «Այլ պարտավորություններ», 377 «Հաշվարկներ ներդրումային ընկերության և իր մասնաճյուղերի միջև»: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ բաժին 30-ի դեպքում:

Ենթաբաժին 373
«Վճարման ենթակա շահաբաժիններ»

Այս ենթաբաժինը նախատեսված է ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին ներդրումային ընկերության կողմից թողարկված արտոնյալ և հասարակ բաժնետոմսերի դիմաց վճարվելիք շահաբաժինների հաշվառման համար: Շահաբաժիններ հայտարարելիս ներդրումային ընկերությունը ձևակերպում է՝

Դտ- 531 «Չբաշխված շահույթ»

Կտ- 373:

Շահաբաժինները վճարելիս՝

Դտ-373

Կտ- Դրամական միջոցներ:

Ենթաբաժին 374
«Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ»

Այս ենթաբաժինը նախատեսված է ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 17 «Վարձակալություն» ստանդարտի համաձայն:

3740 «Ֆինանսական վարձակալության գծով ռեզիդենտներին վճարվելիք գումարներ»-հաշիվը նախատեսված է ռեզիդենտներին ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է հիմնական միջոցների վարձակալության վերցման դեպքում՝

Դտ- 2626 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ»

Կտ- 3740:

Հաշիվը դեբետագրվում է վարձավճարները վճարելիս՝

Դտ -3740

Կտ - Դրամական միջոցներ:

3741 «Ֆինանսական վարձակալության գծով ոչ ռեզիդենտներին վճարվելիք գումարներ» - հաշիվը նախատեսված է ոչ ռեզիդենտներին ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 3740 հաշվի դեպքում:

Ենթաբաժին 375
«Հետաձգված հարկային պարտավորություններ»

3750 «Հետաձգված հարկային պարտավորություններ- այս հաշիվը նախատեսված է հարկվող ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած շահութահարկի գծով հետաձգված հարկային պարտավորությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հետաձգված հարկային պարտավորությունների հաշվառման մոտեցումները նկարագրված են ՀՀՀՀՍ 12 «Շահութահարկ» ստանդարտում:

Ենթաբաժին 376
«Այլ պարտավորություններ»

Այս ենթաբաժնում հաշվառվում են այն պարտավորություններն ու դրանց գծով հաշվեգրված տոկոսները, որոնց համար առանձին հաշիվներ նախատեսված չեն:

Ենթաբաժին 377
«Հաշվարկներ ներդրումային ընկերության և իր մասնաճյուղերի միջև»

Այս ենթաբաժնում հաշվառվում են այն գումարները, որոնք առաջանում են ներդրումային ընկերության և մասնաճյուղերի միջև փոխադարձ հաշվարկների արդյունքում: Հաշվետվությունը ներկայացնելու կամ հրապարակելու ժամանակ այս հաշիվը ենթակա է զրոյացման: Զրոյացման արդյունքում առաջացած մնացորդը դասակարգվում է համապատասխան հաշիվներին: Եթե դա անհնար է, ապա անհրաժեշտ է առաջացած մնացորդը գրանցել 376 «Այլ պարտավորություններ» ենթաբաժինների հաշիվների վրա: Հաջորդ օրը մնացորդը վերականգնվում է սույն ենթաբաժնի հաշիվներին:

ԲԱԺԻՆ 38
«Ածանցյալ գործիքներ»

Այս բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ 380 ««Առևտրական նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ», 381; 382 «Հեջավորման ածանցյալ գործիքներ»:

Ենթաբաժին 380
«Առևտրական նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ»

Այս ենթաբաժնի հաշիվներն օգտագործվում են առևտրական նպատակներով պահվող ածանցյալ գործիքների հաշվառման նպատակով:

Հաշվեկշռում ածանցյալ գործարքն արտացոլվում է պայմանագրի ձեռքբերման օրվանից: Հաշվառումը տարվում է իրական արժեքով՝ վերագնահատման արդյունքն արտացոլելով եկամուտներում կամ ծախսերում:

Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 32, ՀՀՀՀՍ 39 ստանդարտների և այլ կարգերի համաձայն:

Ենթաբաժին 381; 382
«Հեջավորման ածանցյալ գործիքներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են հեջավորման ածանցյալ գործիքների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 32, ՀՀՀՀՍ 39 ստանդարտների և այլ կարգերի համաձայն:

ԲԱԺԻՆ 39
«Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ»

Այս բաժինը բաղկացած է 390 «Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ» ենթաբաժնից:

Ենթաբաժին 390
«Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ»

3900 «Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ»- այս հաշիվը ներկայացնում է հաճախորդներից կամ այլ աղբյուրներից ստացված վճարումները՝ ներդրումային ընկերության կողմից մատուցվելիք ծառայությունների դիմաց, որոնք վերաբերում են ապագա ժամանակաշրջանին: Այս հաշվում հաշվառվում են նաև տրամադրված վարկերի դիմաց պայմանագրով սահմանված ժամկետից շուտ ստացվող (կանխավճարվող) տոկոսագումարները: Ծառայությունները մատուցելուց, իսկ վարկերի դեպքում՝ պայմանագրով նախատեսված ժամկետը լրանալուց հետո և/կամ դրան զուգահեռ, այս հաշվի գումարները փոխանցվում են 6000 կարգի համապատասխան հաշիվներին:

Հաշիվը կրեդիտագրվում է ապագա ժամանակաշրջանի եկամուտների չափով՝
Դտ Դրամական միջոցներ
Կտ 3900:
Հաշիվը դեբետագրվում է ապագա ժամանակաշրջանում ճանաչված եկամտի չափով՝
Դտ 3900
Կտ Համապատասխան եկամտային հաշիվներ:

ԲԱԺԻՆ 40
«Ակտիվներին վերաբերող շնորհներ»

Ենթաբաժին 400
«Ակտիվներին վերաբերող շնորհներ»

4000 «Ակտիվներին վերաբերող շնորհներ» - հաշիվը նախատեսված է ակտիվներին վերաբերող շնորհների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ակտիվներին վերաբերող շնորհների հաշվապահական հաշվառման մոտեցումները նկարագրված են ՀՀՀՀՍ 20 «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ստանդարտում:

ԲԱԺԻՆ 41
«Պահուստներ»

Ենթաբաժին 410
«Պահուստներ»

4100 «Պահուստներ»- այս հաշիվը նախատեսված է որպես պարտավորություն ճանաչվող պահուստների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Պահուստներ ձևավորվում են բանկային երաշխիքների և այլ պարտավորությունների գծով: Պահուստների հաշվառման մոտեցումները նկարագրված են ՀՀՀՀՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ստանդարտում:

ԿԱՐԳ 5 ԿԱՊԻՏԱԼ

ԲԱԺԻՆ 50

«Կապիտալ»

Այս բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ 500 «Կանոնադրական կապիտալ և էմիսիոն եկամուտ/զեղչ», 501«Չվճարված կապիտալ»:

Ենթաբաժին 500
«Կանոնադրական կապիտալ և էմիսիոն եկամուտ/զեղչ»

5000 «Արտոնյալ բաժնետոմսեր-անվանական արժեք»- հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության կողմից թողարկված արտոնյալ բաժնետոմսերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է բաժնետոմսերի անվանական արժեքով: Հաշիվը կրեդիտագրվում է արտոնյալ բաժնետոմսերի (այդ թվում՝ նաև լրացուցիչ) թողարկման դեպքում:

5001 «Արտոնյալ բաժնետոմսեր-էմիսիոն եկամուտ»-այս հաշվում հաշվառվում է ներդրողների կողմից արտոնյալ բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գնի և անվանական արժեքի միջև եղած դրական տարբերությունը:

5002 «Արտոնյալ բաժնետոմսեր-զեղչ»- այս հաշվում հաշվառվում է ներդրողների կողմից արտոնյալ բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գնի և անվանական արժեքի միջև եղած բացասական տարբերությունը»:

5003 «Սովորական բաժնետոմսեր- անվանական արժեք»- հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության կողմից թողարկված սովորական բաժնետոմսերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է բաժնետոմսերի անվանական արժեքով: Հաշիվը կրեդիտագրվում է սովորական բաժնետոմսերի (այդ թվում նաև՝ լրացուցիչ) թողարկման դեպքում:

5004 «Սովորական բաժնետոմսեր- էմիսիոն եկամուտ»-այս հաշվում հաշվառվում է ներդրողների կողմից սովորական բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գնի և անվանական արժեքի միջև եղած դրական տարբերությունը:

5005 «Սովորական բաժնետոմսեր-զեղչ»- այս հաշվում հաշվառվում է ներդրողների կողմից սովորական բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գնի և անվանական արժեքի միջև եղած բացասական տարբերությունը:

Ենթաբաժին 501
«Չվճարված կապիտալ»

501 «Չվճարված կապիտալ» ենթաբաժինը նախատեսված է ներդրումային ընկերության չվճարված կապիտալի առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Հաշիվն ակտիվապասիվային է, կարգավորող: Այս ենթաբաժինը բաղկացած է 5010 «Թողարկված և չտեղաբաշխված կապիտալ» և 5011 «Տեղաբաշխված և չվճարված կապիտալ» հաշիվներից: Հաշվի դեբետում արտացոլվում են բաժնետիրական ընկերությունների կողմից թողարկված, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքը, ինչպես նաև մասնակիցների (հիմնադիրների) պարտքը ներդրումային ընկերությունների կապիտալում ներդրումների գծով, իսկ կրեդիտում՝ այդ պարտքի մարումը, չմարված պարտքերի կամ թողարկված, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի հաշվին կապիտալի նվազեցումը:

ԲԱԺԻՆ 51
«Պահուստներ»

Այս բաժինը բաղկացած է 511 «Գլխավոր պահուստ» և 512;513 «Վերագնահատումից (վերաչափումից) պահուստներ ենթաբաժիններից:

Ենթաբաժին 511

«Գլխավոր պահուստ»

5111 «Գլխավոր պահուստ»-այս հաշվում հաշվառվում է այն պահուստը, որն ստեղծվում է ներդրումային ընկերության տրամադրության տակ մնացած շահույթից՝ չնախատեսված ծախսերի փոխհատուցման նպատակով:

Եռնքաբաժին 512; 513
«Վերագնահատման (վերաչափման) պահուստներ»

5121 «Շենքերի և շինությունների վերագնահատման պահուստ»- այս հաշվում հաշվառվում է շենքերի և շինությունների պարբերաբար վերագնահատումից առաջացած չիրացված շահույթը՝ հաշվեկշռային արժեքը գերազանցող գումարի չափով: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 16-ի համաձայն, ընդ որում, որևէ հիմնական միջոցի որևէ տեսակի վերագնահատման դեպքում վերագնահատվում են տվյալ դասի բոլոր հիմնական միջոցները: Վերագնահատումը կատարվում է ներդրումային ընկերությունների կողմից և հաստատվում անկախ կազմակերպության կողմից: Վերագնահատման արդյունքում շենքերի և շինությունների հաշվեկշռային արժեքի նվազումը դեբետագրվում է 7301 «Կորուստներ հիմնական միջոցների վերագնահատումից» հաշվին: Եթե նախկինում այդ հիմնական միջոցը վերագնահատվել է, և արդյունքը կրեդիտագրվել է «Շենքերի և շինությունների վերագնահատման պահուստ» հաշվին, ապա նվազման գումարը դուրս է գրվում այդ հաշվից: Վերագնահատումից հետո ամորտիզացիոն ծախսերը եկամուտների և ծախսերի հաշվետվությունում ավելի մեծ լինելու դեպքում ամորտիզացիոն ծախսերի ավելացած գումարը տեղափոխվում է այս հաշվից «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ/վնաս» հաշվին: Հիմնական միջոցների իրացման դեպքում այս հաշվի մնացորդները նույնպես ուղղակիորեն փոխանցվում են «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ/վնաս» հաշվին:

5122 «Այլ հիմնական միջոցների վերագնահատման պահուստ» - այս հաշվում հաշվառվում է այլ հիմնական միջոցների (բացառությամբ՝ շենքերի և շինությունների) պարբերաբար վերագնահատումից առաջացած չիրացված շահույթը՝ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը գերազանցող գումարի չափով: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 16-ի համաձայն, ընդ որում, որևէ հիմնական միջոցի որևէ տեսակի վերագնահատման դեպքում վերագնահատվում են տվյալ դասի բոլոր հիմնական միջոցները: Վերագնահատումը կատարվում է ներդրումային ընկերության կողմից և հաստատվում անկախ կազմակերպության կողմից: Վերագնահատման արդյունքում հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի նվազումը դեբետագրվում է 7301 «Կորուստներ հիմնական միջոցների վերագնահատումից» հաշվին: Եթե նախկինում այդ հիմնական միջոցը վերագնահատվել է, և արդյունքը կրեդիտագրվել է «Շենքերի և շինությունների վերագնահատման պահուստ» հաշվին, ապա նվազման գումարը դուրս է գրվում այդ հաշվից: Վերագնահատումից հետո ամորտիզացիոն ծախսերը եկամուտների և ծախսերի հաշվետվությունում ավելի մեծ լինելու դեպքում ամորտիզացիոն ծախսերի ավելացած գումարը տեղափոխվում է այս հաշվից «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ/վնաս» հաշվին: Հիմնական միջոցների իրացման դեպքում այս հաշվի մնացորդները նույնպես ուղղակիորեն փոխանցվում են «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ/վնաս» հաշվին:

5123 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերաչափումից առաջացած չիրացված շահույթ/վնաս»- այս հաշվում հաշվառվում է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերաչափումից առաջացած չիրացված շահույթը/վնասը: Հաշվի մնացորդն արտացոլում է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերաչափման արդյունքում կուտակված շահույթը/վնասը: Հաշվում գրանցվում են ակտիվների ճշգրտումները՝ որպես հաշվեկշռային արժեքի և վերջին իրական արժեքի միջև տարբերություն: Այս ճշգրտումները գրանցվում են «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների շուկայական արժեքի ճշտման հաշիվ» հաշվին: Երբ ակտիվը վաճառվում կամ վերադասակարգվում է առևտրային նպատակներով պահվող կարգի, ապա այդ օրվա դրությամբ կուտակված վերաչափման արդյունքում առաջացած չիրացված շահույթը կամ վնասը դուրս է գրվում այս հաշվից՝ թղթակցելով 13 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ» բաժնի ճշգրտման հաշիվների հետ, իսկ այդ օրվա իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի միջև տարբերությունը գրանցվում է եկամուտների և ծախսերի հաշվետվությունում՝ որպես

իրացված շահույթ կամ վնաս: Եթե վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվը փոխանցվում է մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի կարգ, ապա չիրացված շահույթը կամ վնասն անմիջապես գրանցվում է հաշվեկշռի կապիտալի բաժնի 5124 «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով շահույթ/վնաս» հաշվին և դուրս գրվում (ամորտիզացվում է) մինչև մարումը մնացած ժամանակաշրջանում եկամուտներին:

5124 «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով շահույթ/վնաս»-տես 5123 հաշիվը:

5125 «Ասոցիացված կազմակերպությունում իրականացված վերագնահատումներից առաջացած շահույթի/վնասի ներդրումային ընկերության բաժնեմասը»- այս հաշվում հաշվառվում է ասոցիացված կազմակերպությունում ներդրումների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթը/վնասը: Հաշվի մնացորդն արտացոլում է ասոցիացված կազմակերպությունում ներդրումների վերագնահատման արդյունքում կուտակված շահույթը/վնասը: Այս ներդրումները վերագնահատվում են ասոցիացված կազմակերպության ակտիվների վերագնահատման հետևանքով: Հաշիվը թղթակցում է ասոցիացված կազմակերպությունների կանոնադրական կապիտալներում ներդրումների հաշիվների հետ:

5126 «Համատեղ վերահսկվող միավորներում իրականացված վերագնահատումներից առաջացած շահույթի/վնասի ներդրումային ընկերության բաժնեմասը»- հաշվում հաշվառվում է համատեղ վերահսկվող միավորներում մասնակցության վերագնահատումից առաջացած չիրացված շահույթը/վնասը: Հաշվի մնացորդն արտացոլում է համատեղ վերահսկվող միավորներում մասնակցությունների վերագնահատման արդյունքում կուտակված շահույթը/վնասը: Այս ներդրումները վերագնահատվում են համատեղ վերահսկվող միավորներում ակտիվների վերագնահատման հետևանքով: Հաշիվը թղթակցում է համատեղ վերահսկվող միավորներում ներդրումների հաշիվների հետ:

5127 «Դուստր բանկերում ներդրումների վերագնահատումից իրականացված վերագնահատումներից առաջացած շահույթի/վնասի ներդրումային ընկերության բաժնեմասը»- այս հաշվում հաշվառվում է դուստր բանկերում ներդրումների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթը/վնասը: Հաշվի մնացորդը արտացոլում է դուստր բանկերում ներդրումների վերագնահատման արդյունքում կուտակված շահույթը/վնասը: Այս ներդրումները վերագնահատվում են դուստր բանկերի ակտիվների վերագնահատման հետևանքով: Հաշիվը թղթակցում է դուստր բանկերում ներդրումների հաշիվների հետ:

5128 «Դուստր ներդրումային ընկերություններում իրականացված վերագնահատումներից առաջացած շահույթի/վնասի ներդրումային ընկերության բաժնեմասը»-այս հաշվում հաշվառվում է դուստր ներդրումային ընկերություններում ներդրումների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթը/վնասը: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 5127 հաշվի դեպքում:

5129 «Այլ դուստր ընկերություններում իրականացված վերագնահատումներից առաջացած շահույթի/վնասի ներդրումային ընկերության բաժնեմասը»-այս հաշվում հաշվառվում է ոչ բանկ դուստր ընկերություններում ներդրումների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթը/վնասը: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 5127 հաշվի դեպքում:

«5131 «Դրամական հոսքերի հեջավորման ածանցյալ գործիքների վերագնահատման պահուստ»- այս հաշիվը նախատեսված է դրամական հոսքերի հեջավորման ածանցյալ գործիքներից վերագնահատման արդյունքները հաշվառելու համար: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 39-ի և այլ սահմանված կարգերի համաձայն:

5132 «Ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստ»-այս հաշվում հաշվառվում է ներդրումային ընկերության ոչ նյութական ակտիվների վերագնահատման արդյունքը: Վերագնահատման հաշվառումը ներկայացված է ՀՀՀՀՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ» ստանդարտում:

ԲԱԺԻՆ 52
«Հետ գնված կապիտալ»

Ենթաբաժին 521
«Հետ գնված կապիտալ»

Այս ենթաբաժնում հաշվառվում են ներդրումային ընկերության կողմից օրենքով սահմանված կարգով հետ գնված կապիտալի գումարները: Սեփական բաժնետոմսերը (բաժնեմասերը, փայամասերը), սովորաբար, չունեն ձայնի և շահաբաժնի իրավունք, ինչպես նաև ներդրումային ընկերության լուծարման դեպքում առաջացող իրավունքներ: Այս բաժնետոմսերը (բաժնեմասերը, փայամասերը) հաշվեկշռում գրանցվում են բացասական նշանով և օտարվում են օրենքով սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ 53
«Չբաշխված շահույթ»

Ենթաբաժին 531
«Չբաշխված շահույթ»

5311 «Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ/վնաս»- այս հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության ընթացիկ տարվա գործունեության ֆինանսական արդյունքի (շահույթի կամ վնասի) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Յուրաքանչյուր նոր ֆինանսական տարվա սկզբին այս հաշվի մնացորդը (նախորդ տարվա զուտ շահույթը/զուտ վնասը) տեղափոխվում է 5312 «Նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ/վնաս» հաշվին:

5312 «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ(վնաս)»-այս հաշիվը նախատեսված է նախորդ ֆինանսական տարիների չբաշխված շահույթի (չծածկված վնասի) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Հաշվի կրեդիտում արտացոլվում է նախորդ տարվա զուտ շահույթը, նախորդ տարիների վնասների ծածկումը գլխավոր պահուստի հաշվին, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի չբաշխված շահույթին վերագրումը, իսկ դեբետում՝ չբաշխված շահույթի օգտագործումը, նախորդ տարվա զուտ վնասը:

Ենթաբաժին 532
«Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթի ճշգրտում»

Այս ենթաբաժինը նախատեսված է նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող գործառնությունների գծով հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքում առաջացած ճշգրտումների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար (եթե ներդրումային ընկերությունն ընտրել է այնպիսի քաղաքականություն, ըստ որի՝ էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքները ճշգրտում են չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը): Նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական արդյունքների ճշգրտման մոտեցումները նկարագրված են ՀՀՀՀՍ 8 «Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ կամ վնաս, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ» ստանդարտում:

ԿԱՐԳ 6. ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

ԲԱԺԻՆ 60;61
«Տոկոսային եկամուտներ»

Այս բաժինը նախատեսված է ներդրումային ընկերության կողմից իրականացված տարբեր գործառնություններից ստացված տոկոսային եկամտի հաշվառման համար: Բաժնում ներառված են հետևյալ ենթաբաժինները՝ 600 «Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից», 601 «Տոկոսային եկամուտներ առևտրական նպատակներով պահվող արժեթղթերից», 602 «Տոկոսային եկամուտներ վաճառքի համար մատչելի արժեթղթերից», 603 «Տոկոսային եկամուտներ մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերից», 604 «Տոկոսային եկամուտներ բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերից (փոխատվություններից)», 605 «Տոկոսային եկամուտներ այլ անձանց տրված վարկերից (փոխատվություններից)», 606 «Տոկոսային եկամուտներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ ռեպո համաձայնագրերից», 607 «Տոկոսային եկամուտներ այլ անձանց հետ ռեպո համաձայնագրերից», 608 «Տոկոսային եկամուտներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ արժութային սվոպից», 609 «Տոկոսային եկամուտներ այլ անձանց հետ արժութային սվոպից», 610 «Տոկոսային եկամուտներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ տոկոսադրույքային սվոպից», 611 «Տոկոսային եկամուտներ այլ անձանց հետ տոկոսադրույքային սվոպից», 612 «Տոկոսային եկամուտներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ սվոպի այլ տեսակներից», 613 «Տոկոսային եկամուտներ այլ անձանց հետ սվոպի այլ տեսակներից», 614 «Այլ տոկոսային եկամուտներ»:

Եկամուտ ճանաչելիս այս հաշիվները կրեդիտագրվում են՝ թղթակցելով ստացվելիք տոկոսների հաշիվների հետ:

ԲԱԺԻՆ 62
«Ոչ տոկոսային եկամուտներ»

Այս բաժինը նախատեսված է ներդրումային ընկերության կողմից իրականացված տարբեր գործառնություններից ստացված ոչ տոկոսային եկամտի հաշվառման համար:

Բաժնում ներառված են հետևյալ ենթաբաժինները՝ 620 «Ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք գումարներ», 621 «Երաշխիքներից ստացվելիք գումարներ», 622 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ», 623 «Եկամուտ այլ կազմակերպություններում ներդրումներից», 624; 625 «Ներդրումային ծառայությունների մատուցումից եկամուտներ», 626; 627 «Օգուտներ», 628 «Կորուստների վերականգնում (փոխհատուցում)»:

Ենթաբաժին 623
«Եկամուտ այլ կազմակերպություններում ներդրումներից»

6230 «Եկամուտ շահաբաժիններից»- այս հաշվում հաշվառվում են այլ անձանց կանոնադրական կապիտալներում կատարված ներդրումներից ստացված շահաբաժինները: Տես 230 «Ստացվելիք շահաբաժիններ» ենթաբաժնի մեկնաբանությունը:

6231 «Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից զուտ շահույթ (վնաս)»-այս հաշվում հաշվառվում է ասոցիացված կազմակերպությունների կողմից ստացված շահույթներում կամ վնասներում ներդրումային ընկերության ունեցած բաժնեմասը: Տես 250 «Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալներում» ենթաբաժնի մեկնաբանությունը:

6232 «Համատեղ վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ(վնաս)»-այս հաշվում հաշվառվում է համատեղ վերահսկվող միավորների կողմից ստացված շահույթներում կամ վնասներում ներդրումային ընկերության ունեցած բաժնեմասը: Հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՀՀՍ 31 ստանդարտի:

6233 «Դուստր բանկերում ներդրումներից զուտ շահույթ(վնաս)»-այս հաշվում հաշվառվում է դուստր բանկերի կողմից ստացված շահույթներում կամ վնասներում ներդրումային ընկերության

ունեցած բաժնեմասը: Տես 250 «Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալներում» ենթաբաժնի մեկնաբանությունը:

6234 «Դուստր ներդրումային ընկերություններում ներդրումներից զուտ շահույթ(վնաս)»-այս հաշվում հաշվառվում է դուստր ներդրումային ընկերությունների կողմից ստացված շահույթներում կամ վնասներում ներդրումային ընկերության ունեցած բաժնեմասը: Տես 250 «Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալներում» ենթաբաժնի մեկնաբանությունը:

6235 «Այլ դուստր ընկերություններում ներդրումներից զուտ շահույթ(վնաս)»-այս հաշվում հաշվառվում է այլ ֆինանսական դուստր ընկերությունների կողմից ստացված շահույթներում կամ վնասներում ներդրումային ընկերության ունեցած բաժնեմասը: Տես 250 «Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալներում» ենթաբաժնի մեկնաբանությունը:

6236 «Այլ ռեզիդենտ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ/վնաս»-այս հաշվում հաշվառվում է այլ ռեզիդենտ ընկերությունների կողմից ստացված շահույթներում կամ վնասներում ներդրումային ընկերության ունեցած բաժնեմասը: Տես 250 «Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալներում» ենթաբաժնի մեկնաբանությունը:

6237 «Այլ ոչ ռեզիդենտ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ/վնաս»-այս հաշվում հաշվառվում է այլ ոչ ռեզիդենտ ընկերությունների կողմից ստացված շահույթներում կամ վնասներում ներդրումային ընկերության ունեցած բաժնեմասը: Տես 250 «Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալներում» ենթաբաժնի մեկնաբանությունը

Ենթաբաժին 626;627
«Օգուտներ»

6260 «Հիմնական միջոցների օտարումից ստացված օգուտներ»-այս հաշվում հաշվառվում են հիմնական միջոցների օտարումից ստացված օգուտները: Հաշիվը կրեդիտագրվում է հիմնական միջոցների վաճառքից եկամուտների ստացման դեպքում, հաշվեկշռում արտացոլվում են հետևյալ ձևակերպումներով՝

Դտ- Դրամական միջոցներ

Կտ- 6260 (այն դեպքում, երբ հիմնական միջոցների վաճառքի գինը բարձր է վերջինիս հաշվեկշռային արժեքից):

6262 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ»-այս հաշվում հաշվառվում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների դասի արժեթղթերի վաճառքից ստացված օգուտները: Առևտրական նպատակներով նախատեսված արժեթղթերի օտարումից օգուտները հաշվարկվում են որպես վաճառքի գնի և հաշվեկշռային արժեքի միջև եղած դրական տարբերություն: Տես 11;12 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ» բաժնի հաշիվների մեկնաբանությունը:

6263 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ»-այս հաշվում հաշվառվում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտները: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների օտարումից օգուտները հաշվարկվում են որպես վաճառքի գնի հաշվեկշռային արժեքի միջև եղած դրական տարբերություն: Եթե ակտիվը նախկինում վերագնահատվել է, ապա վերագնահատման հաշվարկված գումարը դուրս է գրվում 5123 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ/վնաս» հաշվից՝ գրանցվելով եկամուտների և

ծախսերի հաշվետվությունում՝ որպես իրացված շահույթ կամ վնաս: Տես 13 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ» բաժնի հաշիվների մեկնաբանությունը:

6264 «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների վաճառքից ստացված օգուտներ»- այս հաշվում հաշվառվում են մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների վաճառքից ստացված օգուտները: Օգուտը հաշվարկվում է որպես այդ արժեթղթերի վաճառքի գնի և հաշվեկշռային արժեքի միջև եղած տարբերություն: Տես 17 «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ» բաժնի հաշիվների մեկնաբանությունը:

6265 «Արտարժույթի առուվաճառքից ստացված օգուտներ»-այս հաշվում հաշվառվում են արտարժույթի առուվաճառքից ստացված օգուտները: Արտարժույթի առուվաճառքի գործառնություններից առաջացած օգուտները հաշվարկվում են որպես արտարժույթի առքի կամ վաճառքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված արտարժույթի հաշվարկային փոխարժեքի տարբերություն:

Այս գործառնությունները պետք է տարբերակվեն հաշվեկշիռների համախմբման ընթացքում առաջացած փոխարժեքային տարբերություններից, որոնք գրանցվում են սեփական կապիտալում՝ 5130 «Արտերկրյա միավորի ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկման արդյունքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստ» հաշվում:

6266 «Արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ»-այս հաշվում հաշվառվում են արտարժույթի վերագնահատման արդյունքում առաջացած օգուտները: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 21-ի համաձայն:

6267 «Այլ գործառնություններից ստացված օգուտներ»-այս հաշվում հաշվառվում են ներդրումային ընկերության սովորական գործունեությունից դուրս գործառնություններից ստացված օգուտները:

6268 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված օգուտներ»- այս հաշվում հաշվառվում է առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերագնահատման դրական տարբերությունը: Այդ գումարներով դեբետագրվում են 11;12 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ» բաժնի ճշգրտման հաշիվները՝ թղթակցելով 6268 հաշվի կրեդիտի հետ:

6269 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերաչափումից ստացված օգուտներ»-այս հաշվում հաշվառում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման դրական տարբերությունը: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 39-ի համաձայն: Հաշիվը կիրառվում է այն դեպքում, եթե ընտրվել է ստանդարտի այն մոտեցումը, ըստ որի՝ վաճառքի համար նախատեսված արժեթղթերի վերագնահատումները գրանցվում են ֆինանսական արդյունքներում: Այդ գումարներով դեբետագրվում են 13 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ» բաժնի ճշգրտման հաշիվները՝ թղթակցելով 6269 հաշվի կրեդիտի հետ:

6271 «Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի վերավաճառքից օգուտներ»- այս հաշիվը նախատեսված է ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի օտարումից առաջացած օգուտների հաշվառման համար: Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի օտարումից օգուտները հաշվարկվում են որպես դրանց վաճառքի գնի և հաշվեկշռային արժեքի միջև եղած դրական տարբերություն: Հաշվառումն իրականացվում է ՀՀՀՀՍ 39-ի սկզբունքներին համապատասխան

6272 «Ածանցյալ գործիքների վերագնահատումից օգուտներ»- այս հաշիվը նախատեսված է հեջավորման ածանցյալ գործիքների դրական վերագնահատման հաշվառման համար:

6273 «Ածանցյալ գործիքների վաճառքից օգուտներ»- այս հաշիվը նախատեսված է հեջավորման ածանցյալ գործիքների վաճառքից օգուտների հաշվառման համար:

6274 «Հիմնական միջոցների վերագնահատումից և արժեզրկման հակադարձումից օգուտներ»- այս հաշիվը նախատեսված է հիմնական միջոցների վերագնահատումից և արժեզրկման հակադարձումից օգուտները հաշվառելու համար: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 16-ի և ՀՀՀՀՍ 36-ի համաձայն:

6275 «Ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված օգուտներ»-այս հաշվում հաշվառվում են ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված օգուտները: Հաշիվը կրեդիտագրվում է ոչ նյութական ակտիվների վաճառքից եկամուտների ստացման դեպքում, հաշվեկշռում արտացոլվում են հետևյալ ձևակերպումներով՝

Դտ- Դրամական միջոցներ

Կտ- 6275 (այն դեպքում, երբ ոչ նյութական ակտիվի վաճառքի գինը բարձր է վերջինիս հաշվեկշռային արժեքից):

6277 «Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և արժեզրկման հակադարձումից օգուտներ»- հաշիվը նախատեսված է ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և արժեզրկման հակադարձումից օգուտները հաշվառելու համար: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 38-ի և ՀՀՀՀՍ 36-ի համաձայն:

ԲԱԺԻՆ 63
ԱՐՏԱՍՈՎՈՐ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Ենթաբաժին 630
«Արտասովոր եկամուտներ»

6300 «Արտասովոր եկամուտներ»- այս հաշվում հաշվառվում են ներդրումային ընկերության հիմնական գործունեությունից դուրս ստացված եկամուտները:

ԲԱԺԻՆ 64
«ՄԻՋՄԱՍՆԱՁՅՈՒղԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (ԾԱԽՍԵՐ)»

Ենթաբաժին 640
«Միջմասնաճյուղային եկամուտներ (ծախսեր)»

6400 «Միջմասնաճյուղային եկամուտներ (ծախսեր)»- այս հաշվում հաշվառվում են ներմասնաճյուղային գործառնությունների արդյունքում առաջացած եկամուտները և ծախսերը: Մասնաճյուղերի հաշվեկշիռները միավորելիս հաշիվը զրոյացվում է:

ԲԱԺԻՆ 65
«Նախորդ ժամանակաշրջանների եկամուտներ»

Ենթաբաժին 650
«Նախորդ ժամանակաշրջանների եկամուտներ»

Այս ենթաբաժինը նախատեսված է նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող գործառնությունների գծով հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքում առաջացած նախորդ տարիների եկամուտների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար (եթե ներդրումային ընկերությունն ընտրել է այնպիսի քաղաքականություն, ըստ որի՝ էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքները ներառվում են հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքներում): Նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական արդյունքների ճշգրտման մոտեցումները նկարագրված են ՀՀՀՀՍ 8 «Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ կամ վնաս, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ» ստանդարտում:

ԿԱՐԳ 7. ԾԱԽՍԵՐ

ԲԱԺԻՆ 70;71
ՏՈԿՈՍԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ

Այս բաժինը նախատեսված է ներդրումային ընկերության կողմից իրականացված տարբեր գործառնություններից կրած տոկոսային ծախսերի հաշվառման համար: Բաժնում ներառված են հետևյալ ենթաբաժինները՝ 700; 701 «Տոկոսային ծախսեր բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված փոխառությունների դիմաց», 702 «Տոկոսային ծախսեր այլ անձանցից ներգրավված փոխառությունների դիմաց», 703 «Տոկոսային ծախսեր ստացված վարկերի դիմաց», 704 «Տոկոսային ծախսեր ՀՀ կառավարության և այլ պետությունների կառավարությունների նկատմամբ պարտավորությունների դիմաց», 705 «Տոկոսային ծախսեր բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ ռեպո համաձայնագրերի գծով», 706 «Տոկոսային ծախսեր այլ անձանց հետ ռեպո համաձայնագրերի գծով», 707 «Տոկոսային ծախսեր բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ արժութային սվոպի գծով», 708 «Տոկոսային ծախսեր այլ անձանց հետ արժութային սվոպի գծով», 709 «Տոկոսային ծախսեր ներդրումային ընկերությունների կողմից թողարկված արժեթղթերի դիմաց», 710 «Տոկոսային ծախսեր բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ տոկոսադրույքային սվոպի գծով», 711 «Տոկոսային ծախսեր այլ անձանց հետ տոկոսադրույքային սվոպի գծով», 712 «Տոկոսային ծախսեր բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ սվոպի այլ տեսակների գծով», 713 «Տոկոսային ծախսեր այլ անձանց հետ սվոպի այլ տեսակների գծով», 714 «Այլ տոկոսային ծախսեր»: Ծախս ճանաչելիս այս հաշիվները դեբետագրվում են՝ թղթակցելով հաշվեգրված վճարվելիք տոկոսների հաշիվների հետ:

ԲԱԺԻՆ 72
«ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ»

Ենթաբաժին 720
«Ծախսեր անձնակազմի գծով»

Այս ենթաբաժնում հաշվառվում են ներդրումային ընկերության հիմնական և պայմանագրային աշխատողներին տրվող աշխատավարձի, պարգևատրումների և լրավճարների, արձակուրդների և ոչ աշխատանքային օրերի համար վճարումների, անձնակազմի ուսուցման և անձնակազմի սպասարկման այլ ծախսերը, ինչպես նաև սոցիալական ապահովության գծով հատկացումները: Այս ենթաբաժնի հաշիվները թղթակցում են դեբիտորական և կրեդիտորական պարտքերի համապատասխան հաշիվների հետ:

Ենթաբաժին 721;722
«Կառավարչական ծախսեր»

Այս ենթաբաժնում հաշվառվում են ներդրումային ընկերության շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալության, շենքի, սարքավորումների ու փոխադրամիջոցների տեխնիկական սպասարկման և պահպանման, անվտանգության ապահովման, աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների, կապի և հաղորդակցական միջոցների, փոխհատուցվող հարկերի ու տուրքերի, վարկերի տրամադրման և վերադարձման, գործուղումների, գրասենյակային, ապահավագրության, կազմակերպչական և այլ կառավարչական ծախսերը: Այս ենթաբաժնի հաշիվները թղթակցում են դեբիտորների և կրեդիտորների համապատասխան հաշիվների կամ դրամական միջոցների հաշիվների հետ:

Ենթաբաժին 723
«Հասարակական կապերի գծով ծախսեր»

Այս ենթաբաժնում հաշվառվում են գովազդի, հասարակական կապերի անդամավճարների և ներդրումային ընկերության ներկայացուցչության հետ կապված ծախսերը: Ենթաբաժնի հաշիվները թղթակցում են ակտիվների և պարտավորությունների համապատասխան հաշիվների կամ դրամական միջոցների հաշիվների հետ:

Ենթաբաժին 724
«Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր»

Այս ենթաբաժնում հաշվառվում են ներդրումային ընկերության հիմնական միջոցների մաշվածության ծախսերը, ինչպես նաև ֆինանսական վարձակալության պայմանագրի համաձայն ներդրումային ընկերության տիրապետության տակ գտնվող հիմնական միջոցների մաշվածության ծախսերը: Ենթաբաժնի հաշիվները դեբետագրվում են հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսերը հաշվեգրելիս՝ թղթակցելով հիմնական միջոցների ամորտիզացիան և արժեզրկումը հաշվառող ենթաբաժնի համապատասխան հաշիվների հետ: Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսերը պետք է հիմնվեն այդ միջոցների օգտակար տևողության վրա՝ հաշվի առնելով հաշվարկված մնացորդային արժեքը, եթե սեփականության իրավունքը պետք է փոխանցվի ներդրումային ընկերությանը վարձակալության ժամկետի ավարտից հետո: Եթե սեփականության իրավունքը չի փոխանցվում ներդրումային ընկերությանը վարձակալության ժամկետի ավարտից հետո, ապա ամորտիզացիոն ծախսերը պետք է հիմնվեն վարձակալության ժամանակաշրջանի վրա, եթե այն ավելի կարճ է, քան կապիտալիզացված ակտիվի հաշվարկված օգտակար տևողությունը: Կիրառվող ամորտիզացիոն մեթոդը պետք է համապատասխանի ներդրումային ընկերության կողմից ընդունված քաղաքականությանը:

Ենթաբաժին 725
«Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր»

Այս ենթաբաժնում հաշվառվում են ներդրումային ընկերության ոչ նյութական ակտիվների մաշվածության ծախսերը: Ենթաբաժնի հաշիվները դեբետագրվում են ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսերը հաշվեգրելիս՝ թղթակցելով ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան և արժեզրկումը հաշվառող ենթաբաժնի համապատասխան հաշիվների հետ:

ԲԱԺԻՆ 73
ԿՈՐՈՒՍՏՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՍՈՎՈՐ ԾԱԽՍԵՐ

Ենթաբաժին 730;731
«Կորուստներ»

7300 «Կորուստներ հիմնական միջոցների օտարումից»-այս հաշիվը նախատեսված է հիմնական միջոցների օտարումից առաջացած կորուստների հաշվառման համար: Հիմնական միջոցների օտարումից կորուստները հաշվարկվում են որպես հաշվեկշռային արժեքի և վաճառքի գնի միջև եղած բացասական տարբերություն: Հաշվեկշռային արժեքը որոշվում է որպես ձեռքբերման արժեքի և հաշվարկված ամորտիզացիայի տարբերություն՝ օտարման օրվա դրությամբ: Եթե ակտիվը նախկինում վերագնահատվել է, ապա վերագնահատման հաշվարկված գումարը դուրս է գրվում 5121 «Շենքերի և շինությունների վերագնահատման պահուստ» և 5122 «Այլ հիմնական միջոցների վերագնահատման պահուստ» հաշիվներից՝ թղթակցելով 5312 «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ(վնաս)» հաշվի հետ:

7301 «Կորուստներ հիմնական միջոցների վերագնահատումից»-այս հաշվում հաշվառվում է հիմնական միջոցների պարբերաբար վերագնահատումից առաջացած կորուստը: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 16-ի համաձայն, ընդ որում, որևէ հիմնական միջոցի որևէ տեսակի վերագնահատման դեպքում վերագնահատվում են տվյալ դասի բոլոր հիմնական միջոցները: Վերագնահատման արդյունքում հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի նվազումը դեբետագրվում է 7301 հաշվին: Եթե նախկինում այդ հիմնական միջոցը վերագնահատվել է, և արդյունքը կրեդիտագրվել է «Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ» հաշվին, ապա նվազման գումարը դուրս է գրվում այդ հաշվից:

7302 «Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից»- այս հաշիվը նախատեսված է առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների օտարումից առաջացած կորուստների հաշվառման համար: Առևտրական

նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների օտարումից կորուստները հաշվարկվում են որպես հաշվեկշռային արժեքի և վաճառքի գնի միջև եղած բացասական տարբերություն:

7303 «Կորուստներ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վաճառքից»- այս հաշիվը նախատեսված է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների օտարումից առաջացած կորուստների հաշվառման համար: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների օտարումից կորուստները հաշվարկվում են որպես հաշվեկշռային արժեքի և վաճառքի գնի միջև եղած բացասական տարբերություն: Եթե ակտիվը նախկինում վերագնահատվել է, ապա վերագնահատման հաշվարկված գումարը դուրս է գրվում 5123 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ (վնաս)» հաշվից՝ գրանցվելով եկամուտների և ծախսերի հաշվետվությունում՝ որպես իրացված շահույթ կամ վնաս:

7304 «Կորուստներ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների վաճառքից»- այս հաշիվը նախատեսված է մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների օտարումից առաջացած կորուստների հաշվառման համար: Իրացված վնասը հաշվարկվում է որպես այդ ներդրումների վաճառքի գնի և դրանց ավելի բարձր հաշվեկշռային արժեքի միջև եղած տարբերություն:

7305 «Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերաչափումից»-այս հաշվում հաշվառվում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերաչափումից առաջացած կորուստները:

7306 «Կորուստներ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերաչափումից»- այս հաշիվը նախատեսված է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերաչափումից առաջացած կորուստների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 39-ի համաձայն: Հաշիվը կիրառվում է այն դեպքում, եթե ընտրվել է ստանդարտի այն մոտեցումը, ըստ որի՝ այս ակտիվների վերագնահատումները գրանցվում են ֆինանսական արդյունքներում: Հաշվում գրանցվում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների ճշգրտումները՝ որպես հաշվեկշռային արժեքի և վերջին իրական արժեքի միջև տարբերություն: Այս ճշգրտումներն արտացոլվում են 13 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ» բաժնի ճշտման հաշիվներում:

7307 «Կորուստներ արտարժույթի առուվաճառքի գործառնություններից» -այս հաշիվը նախատեսված է արտարժույթի առուվաճառքի գործառնություններից առաջացած կորուստների հաշվառման համար: Արտարժույթի առուվաճառքի գործառնություններից առաջացած կորուստները հաշվարկվում են որպես արտարժույթի առքի կամ վաճառքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված արտարժույթի հաշվարկային փոխարժեքի տարբերություն:

7308 «Արտարժույթի վերագնահատումից կորուստներ» -այս հաշիվը նախատեսված է արտարժույթի վերագնահատումից առաջացած կորուստների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 21-ի համաձայն:

7309 «Կորուստներ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի վերավաճառքից»- հաշիվը նախատեսված է ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի օտարումից առաջացած կորուստների հաշվառման համար: Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի օտարումից կորուստները հաշվարկվում են որպես դրանց հաշվեկշռային արժեքի և վաճառքի գնի միջև եղած բացասական տարբերություն: Հաշվառումն իրականացվում է ՀՀՀՀՍ 39-ի սկզբունքներին համապատասխան:

7310 «Մինչև մարման ժամկետը պահվող և այլ կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ներդրումների արժեզրկումներից կորուստ»- այս հաշվի հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 39-ի և ՀՀՀՀՍ 36-ի համաձայն:

7311 «Ածանցյալ գործիքների վերաչափումից կորուստներ»- այս հաշիվը նախատեսված է հեջավորման ածանցյալ գործիքների բացասական վերաչափման հաշվառման համար:

7312 «Ածանցյալ գործիքների վաճառքից կորուստներ»- այս հաշիվը նախատեսված է հեջավորման ածանցյալ գործիքների վաճառքից կորուստների հաշվառման համար:

7313 «Կորուստներ այլ գործառնություններից»-այս հաշվում հաշվառվում են ներդրումային ընկերության այն գործառնություններից առաջացած կորուստները, որոնց հաշվառման համար հաշվային պլանում առանձին հաշիվներ նախատեսված չեն:

7314 «Կորուստներ ոչ նյութական ակտիվների օտարումից»-այս հաշիվը նախատեսված է ոչ նյութական ակտիվների օտարումից առաջացած կորուստների հաշվառման համար: Ոչ նյութական ակտիվների օտարումից կորուստները հաշվարկվում են որպես հաշվեկշռային արժեքի և վաճառքի գնի միջև եղած բացասական տարբերություն: Հաշվեկշռային արժեքը որոշվում է որպես ձեռքբերման արժեքի և հաշվարկված ամորտիզացիայի տարբերություն՝ օտարման օրվա դրությամբ: Եթե ակտիվը նախկինում վերագնահատվել է, ապա վերագնահատման հաշվարկված գումարը դուրս է գրվում 5131 «Ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստ» հաշիվից՝ թղթակցելով 5312 «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ/վնաս» հաշվի հետ:

7315 «Կորուստներ ոչ նյութական ակտիվների վերագնահատումից»- հաշվում հաշվառվում են ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և արժեզրկումից առաջացած կորուստները: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 38-ի և ՀՀՀՀՍ 36-ի համաձայն, ընդ որում, որևէ ոչ նյութական ակտիվի վերագնահատման դեպքում վերագնահատվում են տվյալ դասի բոլոր ոչ նյութական ակտիվները: Վերագնահատման արդյունքում ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի նվազումը դեբետագրվում է 7315 հաշվին: Եթե նախկինում այդ ոչ նյութական ակտիվը վերագնահատվել է, և արդյունքը կրեդիտագրվել է «Ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստ» հաշվին, ապա նվազման գումարը դուրս է գրվում այդ հաշվից:

Ենթաբաժին 732
«Արտասովոր ծախսեր»

7320 «Արտասովոր ծախսեր» -այս հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության այնպիսի ծախսերի հաշվառման համար, որոնք առաջանում են այն դեպքերից կամ գործարքներից, որոնք հստակ տարբերվում են ներդրումային ընկերության սովորական գործունեությունից, և, հետևաբար, չի ակնկալվում դրանց հաճախակի կամ պարբերաբար կրկնվելը:

ԲԱԺԻՆ 74
«ԱՅԼ ԾԱԽՍԵՐ»

Այս բաժնի հաշիվները նախատեսված եմ ներդրումային ընկերության կողմից միջնորդավճարների գծով ծախսեր և այն ծախսերի հաշվառման համար, որոնց հաշվառման համար նախատեսված են հաշվային պլանի հաշիվներ:

ԲԱԺԻՆ 75
ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ (ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ)

Ենթաբաժին 750
«Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)»

Այս ենթաբաժնում հաշվառվում են շահութահարկի գծով ընթացիկ և հետաձգված ծախսերը (փոխհատուցումները): Շահութահարկի հաշվառումը նկարագրված է ՀՀՀՀՍ 12 «Շահութահարկ» ստանդարտում:

ԲԱԺԻՆ 76
«Նախորդ ժամանակաշրջանների ծախսեր»

Ենթաբաժին 760
«Նախորդ ժամանակաշրջանների ծախսեր»

Այս ենթաբաժինը նախատեսված է նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող գործառնությունների գծով հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքում առաջացած նախորդ տարիների ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար (եթե ներդրումային ընկերությունն ընտրել է այնպիսի քաղաքականություն, ըստ որի՝ էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքները ներառվում են հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքներում): Նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական արդյունքների ճշգրտման մոտեցումները նկարագրված են ՀՀՀՀՍ 8 «Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ կամ վնաս, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ» ստանդարտում:

ԲԱԺԻՆ 77
«Հատկացումներ պահուստներին»

Այս բաժնի հաշիվները նախատեսված են ներդրումային ընկերության կողմից արժեզրկված և անհավաքագրելի ակտիվների գծով պահուստներին կատարվող հատկացումները հաշվառելու համար: Հաշիվները դեբետագրվում են կատարվող հատկացումների գումարով, կրեդիտագրվում են պահուստների հակադարձման գումարով:

ԿԱՐԳ 8; 9 ԱՐՏԱՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

Բաժին 80
«Հիմնադրի (հաճախորդի) ակտիվները ներդրումային ընկերության մոտ»

Այս բաժինը բաղկացած է 800 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող ակտիվներ», 801; 802 «Արժեթղթերի փաթեթի կառավարմամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ», 803 «Արժեթղթերի փաթեթի կառավարման ներքո կնքված ռեպո համաձայնագրեր», 804 «Արժեթղթերի փաթեթի կառավարման ներքո կնքված արժութային սվոպ», 805 «Արժեթղթերի փաթեթի կառավարման ներքո կնքված ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր», 806 «Արժեթղթերի փաթեթի կառավարման ներքո կնքված արժութային սվոպով վաճառված արժույթ», 807 «Արժեթղթերի փաթեթի կառավարման ներքո կնքված ռեպո համաձայնագրերով ձեռքբերված արժեթղթեր», 808 «Արժեթղթերի փաթեթի կառավարմամբ առաջացած ածանցյալ գործիքներ» ենթաբաժիններից:
Այն բոլոր դեպքերում, երբ ներդրումային ընկերության կողմից ներդրումային ծառայության համար ստացվելիք եկամտի չափը որոշվում է կախված հաճախորդի ակտիվների արժեքից, ապա ներդրումային ընկերությունը պետք է վերագնահատի հաճախորդի ակտիվներն առնվազն ներդրումային ծառայության դիմաց եկամուտը հաշվեգրելու օրը:
Արժեթղթերի վերաչափումը պետք է կատարվի համաձայն ՀՀՀՀՍ 39-ի, արտարժույթի վերագնահատումը համաձայն ՀՀՀՀՍ 21-ի՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԲ հաշվարկային փոխարժեքը:
Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի ներքո ստացված ակտիվներ պետք է արտացոլվեն ընթացիկ (վերականգնման) արժեքով, այսինքն դրամական միջոցների այն գումարի չափով, որը կվճարվեր, եթե ներկա պահին միևնույն կամ համանման ակտիվ ձեռք բերվեր, իսկ ծառայության մատուցման ընթացքում ձեռքբերված ակտիվները պետք է արտացոլվեն սկզբնական (փաստացի) արժեքով, այսինքն՝ ձեռքբերման պահի դրությամբ դրանց ձեռքբերման համար վճարված կամ վճարվելիք դրամական միջոցների գումարով, այլ ձևով հատուցելու դեպքում հատուցման իրական արժեքի չափով:

Ենթաբաժին 800
«Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող ակտիվներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ներդրումային ընկերության կողմից «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրերի համաձայն իրենց հաճախորդներից կառավարման նպատակով վերցված ակտիվների հաշվառման համար:
Սույն հրահանգի իմաստով «Արժեթղթերի փաթեթի կառավարումը «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետերով սահմանված ծառայություններ են:

8000 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող ՀՀ դրամ» հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության կողմից կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող ՀՀ դրամի առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:
Հաշվի դեբետում արտացոլվում է արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված ՀՀ դրամը, իսկ կրեդիտում՝ հետ վերադարձված միջոցները:

Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված ՀՀ դրամը արտացոլելիս ձևակերպվում է.

Դտ-8000

Կտ-8200 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող ակտիվների գծով պարտավորություններ»

Հիմնադրի միջոցներից ՀՀ դրամով փոխառությունների տրամադրում.

Դտ-8022 «Արժեթղթերի փաթեթի կառավարմամբ տրամադրված փոխառություններ»

Կտ-8000

Հիմնադրի միջոցներից ՀՀ դրամով տրամադրված փոխառությունների մարում.

Դտ-8000

Կտ-8022 «Արժեթղթերի փաթեթի կառավարմամբ տրամադրված փոխառություններ»:
Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրի համար փոխառությունների ներգրավում.

Դտ-8000

Կտ-8222 «Արժեթղթերի փաթեթի կառավարմամբ ստացված փոխառություններ»

8001 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող արտարժույթ»- հաշվի հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 8000 հաշվի դեպքում:

8002 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող ՀՀ պետական արժեթղթեր»- հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության կողմից արժեթղթերի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող արժեթղթերի առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:
Հաշվի դեբետում արտացոլվում է արժեթղթերի կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված միջոցները, վերաչափումից արժեքի աճը, իսկ կրեդիտում՝ հետ վերադարձված, վաճառված միջոցները, վերաչափումից արժեքի նվազումը:
Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հիմնադիրների (հաճախորդների), միջոցների տեսակների, արժեթղթերը թողարկողների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված ՀՀ պետական արժեթղթերն արտացոլելիս ձևակերպվումէ.

Դտ-8002

Կտ-8202 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող ՀՀ պետական արժեթղթերի գծով պարտավորություններ»:

Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն ՀՀ պետական արժեթղթեր ձեռքբերելիս.

Դտ-8002

Կտ-8210 «Արժեթղթերի փաթեթի կառավարմամբ առաջացած կրեդիտորական պարտքեր ՀՀ պետական արժեթղթերի գնումների գծով»:

Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն ՀՀ պետական արժեթղթերը վերաչափելիս (դրական վերաչափման դեպքում)

Դտ-8002

Կտ-8408 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող արժեթղթերի վերաչափումից եկամուտներ»:

Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն ՀՀ պետական արժեթղթերը վաճառելիս, եթե վաճառքի գինը բարձր է արժեթղթի հաշվեկշռային արժեքից.

Դտ-8000 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող ՀՀ դրամ» կամ 8010 «Արժեթղթերի փաթեթի կառավարմամբ առաջացած դեբիտորական պարտքեր ՀՀ պետական արժեթղթերի վաճառքների գծով»

Կտ-8002

Կտ-8400 «Եկամուտներ արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող ՀՀ պետական արժեթղթերի վաճառքից», եթե վաճառքի գինը ցածր է արժեթղթի հաշվեկշռային արժեքից, ապա ձևակերպվում է.

Դտ-8000 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող ՀՀ դրամ» կամ 8010 «Արժեթղթերի փաթեթի կառավարմամբ առաջացած դեբիտորական պարտքեր ՀՀ պետական արժեթղթերի վաճառքների գծով»

Դտ- 8450 «Վնասներ արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող ՀՀ պետական արժեթղթերի գծով»

Կտ-8002

Ենթաբաժնի մյուս հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ-որ 8002 հաշվի դեպքում:

Ենթաբաժին 801;802
«Արժեթղթերի փաթեթի կառավարմամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ»

Այս բաժինը նախատեսված է ներդրումային ընկերության կողմից արժեթղթերի փաթեթի կառավարում իրականացնելիս ներդրումային ընկերության հաճախորդի նկատմամբ այլ անձանց (նրանց, ում մոտ տեղաբաշխվել են հաճախորդի ակտիվները) դեբիտորական պարտքերի հաշվառման համար:

8010 «Արժեթղթերի փաթեթի կառավարմամբ առաջացած դեբիտորական պարտքեր ՀՀ պետական արժեթղթերի վաճառքների գծով»- հաշիվը նախատեսված է հիմնադրին պատկանող ՀՀ պետական արժեթղթերի վաճառքի գծով ստացվելիք գումարների հաշվառման համար:
Վաճառված արժեթղթերի գծով դեբիտորական պարտքերի արտացոլման համար.
Դտ-8010
Կտ-8400 «Եկամուտներ արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող ՀՀ պետական արժեթղթերի վաճառքից»:

8011; 8012; 8013; 8014; 8015 հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ-որ 8010 հաշվի դեպքում է:

8016 «Արժեթղթերի փաթեթի կառավարմամբ ՀՀ պետական արժեթղթերից առաջացած դեբիտորական պարտքեր հաշվեգրված տոկոսների գծով»- հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության հաճախորդի նկատմամբ այլ անձանց պարտավորությունները հաշվեգրված տոկոսների գծով:
Տոկոսներ հաշվեգրելիս ձևակերպվում է.

Դտ 8016
Կտ 8410 «Տոկոսային եկամուտներ արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող ՀՀ պետական արժեթղթերի գծով»:
Հաշվեգրված տոկոսները ստանալիս ներդրումային ընկերությունը ձևակերպում է.
Դտ-8000
Կտ-8016:

8017; 8018; 8019; 8020 հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ-որ 8016 հաշվի դեպքում:

8021 «Արժեթղթերի փաթեթի կառավարմամբ առաջացած դեբիտորական պարտքեր շահաբաժինների գծով»- նախատեսված է հիմնադրի կողմից ներդրումային ընկերությանը կառավարման հանձնված միջոցներով կատարված ներդրումներից ստացվելիք շահաբաժինների հաշվառման համար:
Ստացվելիք շահաբաժինների գումարով ձևակերպվում է.
Դտ-8021
Կտ-8406 «Եկամուտներ շահաբաժինների գծով»
Շահաբաժինները ստանալիս ձևակերպվում է.
Դտ -8000
Կտ - 8021:

8022 «Արժեթղթերի փաթեթի կառավարմամբ տրամադրված փոխառություններ»- հաշիվը նախատեսված է հիմնադրի միջոցներից այլ անձանց տրամադրված փոխառությունների հաշվառման համար:
Փոխառություններ տրամադրելիս ձևակերպվում է.
Դտ 8022
Կտ 8000:
Տրամադրված փոխառությունները մարելիս.
Դտ 8000
Կտ 8022:

Ենթաբաժին 803
«Արժեթղթերի փաթեթի կառավարման ներքո կնքված ռեպո համաձայնագրեր»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ներդրումային ընկերության կողմից հիմնադրի (հաճախորդի) միջոցներով այլ անձանց հետ կնքված ռեպո համաձայնագրերի հաշվառման համար:
Այս բաժնի հաշիվներն օգտագործում է բանկերի և այլ անձանց հետ կնքված ռեպո համաձայնագրերով արժեթղթեր գնող ներդրումային ընկերությունը:
8030 «Ռեպո համաձայնագրեր բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ»- հաշիվը նախատեսված է բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրերի հաշվառման համար:
Գնորդ ներդրումային ընկերությունը արժեթղթերը ստանալուց հետո այդ արժեթղթերի գնման գնով կատարում է հետևյալ ձևակերպումները.
1) Դտ-8030 «Ռեպո համաձայնագրեր բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ»
Կտ-Դրամական միջոցներ և միևնույն ժամանակ
2) Դտ- 8070 «Ռեպո համաձայնագրերով բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ձեռքբերված ՀՀ պետական արժեթղթեր»
Կտ- 8250 «Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ռեպո համաձայնագրերի գծով »:
Ռեպո համաձայնագրի գործողության ժամկետը լրանալիս կատարվում է հետևյալ ձևակերպումները.
1) Դտ-Դրամական միջոցներ
Կտ-8030 «Ռեպո համաձայնագրեր բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ», և միաժամանակ

2) Դտ-8250 «Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ռեպո համաձայնագրերի գծով »

Կտ-8070 «Ռեպո համաձայնագրերով բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ձեռքբերված ՀՀ պետական արժեթղթեր»:

8036 «Ռեպո համաձայնագրերի գծով ստացվելիք տոկոսներ»- հաշիվը նախատեսված է արժեթղթերի փաթեթի կառավարման ներքո կնքված ռեպո համաձայնագրերից ստացվելիք տոկոսների հաշվեգրման համար:

Գնորդ ներդրումային ընկերությունը մինչև ռեպո համաձայնագրի գործողության ավարտը յուրաքանչյուր օր կատարում է տոկոսների հաշվեգրում.

Դտ-8036

Կտ-8418 «Տոկոսային եկամուտներ արժեթղթերի փաթեթի կառավարման ներքո կնքված ռեպո համաձայնագրերի գծով»

Տոկոսները գանձելիս ձևակերպում է.

Դտ-Դրամական միջոցներ

Կտ-8036:

Ենթաբաժին 804
«Արժեթղթերի փաթեթի կառավարման ներքո կնքված արժութային սվոպ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ներդրումային ընկերության կողմից հիմնադրի (հաճախորդի) միջոցներով այլ անձանց հետ կնքված արժութային սվոպի և դրա գծով ստացվելիք տոկոսների հաշվառման համար:

ՀՀ դրամի տրամադրումը արտացոլելու համար՝

Դտ-804 ենթաբաժնի համապատասխան հաշիվներ

Կտ-դրամական միջոցներ

Տրամադրված դրամական միջոցների դիմաց նախատեսված ստացվելիք տոկոսները հաշվեգրելու համար՝

Դտ-8046 «Արժութային սվոպի գծով ստացվելիք տոկոսներ»

Կտ-8419 «Տոկոսային եկամուտներ արժեթղթերի փաթեթի կառավարման ներքո կնքված արժութային սվոպի գծով»

ՀՀ դրամի ետ ստացումն արտացոլելու համար՝

Դտ--դրամական միջոցներ

Կտ-804 ենթաբաժնի համապատասխան հաշիվներ

Հաշվեգրված տոկոսագումարները ստանալիս՝

Դտ- Դրամական միջոցներ

Կտ-8046 «Արժութային սվոպի գծով ստացվելիք տոկոսներ»:

Ենթաբաժին 805
«Արժեթղթերի փաթեթի կառավարման ներքո կնքված ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր»

8050 «Ռեպո համաձայնագրերով բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին վաճառված ՀՀ պետական արժեթղթեր»- հաշիվը նախատեսված է ներդրումային ընկերության կողմից բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրերի հաշվառման համար:

Ռեպո համաձայնագրի հիման վրա արժեթուղթ վաճառող ներդրումային ընկերությունը համաձայնագրի կնքման օրը ձևակերպում է.

1) Դտ-Դրամական միջոցներ

Կտ-8230 «Ռեպո համաձայնագրեր բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ» և

2) Դտ-8050

Կտ- 8002 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող ՀՀ պետական արժեթղթեր»:

3) Տոկոսներ հաշվեգրելիս արժեթուղթ վաճառող ներդրումային ընկերությունը ձևակերպում է.

Դտ- 8462 «Ծախսեր արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի ներքո կնքված ռեպո համաձայնագրերի գծով վճարվելիք տոկոսների գծով»

Կտ- 8256 «Ռեպո համաձայնագրերի գծով վճարվելիք տոկոսներ»:

4) Ռեպո համաձայնագրի գործողության ժամկետի ավարտին արժեթուղթ վաճառող ներդրումային ընկերությունն արժեթղթերը հետգնելիս ձևակերպում է.

Դտ- 8002 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող ՀՀ պետական արժեթղթեր»

Կտ-8050

Դտ-8230 «Ռեպո համաձայնագրեր բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ»

Կտ-Դրամական միջոցներ:

5) Տոկոսները վճարելիս ձևակերպվում է.

Դտ-8256 «Ռեպո համաձայնագրերի գծով վճարվելիք տոկոսներ»

Կտ-Դրամական միջոցներ:

Ենթաբաժին 806
«Արժեթղթերի փաթեթի կառավարման ներքո կնքված արժութային սվոպով վաճառված արժույթ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են արժութային սվոպով վաճառված արտարժույթի հաշվառման համար:

Արտարժույթի տրամադրումը և դրա հետգնման իրավունքն արտացոլելու համար՝

Դտ-806 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ-դրամական միջոցներ:

Արտարժույթի ստացումն արտացոլելու համար՝

Դտ-դրամական միջոցներ

Կտ-806 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Ենթաբաժին 807
«Արժեթղթերի փաթեթի կառավարման ներքո կնքված ռեպո համաձայնագրերով ձեռքբերված արժեթղթեր»

8070 «Ռեպո համաձայնագրերով բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններից ձեռքբերված ՀՀ պետական արժեթղթեր»-հաշիվը նախատեսված է ռեպո համաձայնագրով ռեզիդենտ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ձեռք բերված ՀՀ պետական արժեթղթերի հաշվառման համար:

Գնորդ ներդրումային ընկերությունը արժեթղթերը ստանալուց հետո այդ արժեթղթերի գնման գնով կատարում է հետևյալ ձևակերպումները.

1) Դտ- 8070 «Ռեպո համաձայնագրերով բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններից ձեռքբերված ՀՀ պետական արժեթղթեր»

Կտ- 8250 «Պարտավորություններ ռեպո համաձայանգրերի գծով բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ»

2) Դտ-8300 «Ռեպո համաձայնագրեր բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ»

Կտ-Դրամական միջոցներ

Ներդրումային ընկերությունը ռեպո համաձայնագրով ձեռքբերված, սակայն ռեպո համաձայնագրի գործողության ժամկետի ընթացքում վերավաճառած արժեթղթերի փոխարեն ռեպո համաձայնագրում նշված թողարկմանը համապատասխանող արժեթղթեր ձեռք բերելիս դրանք պետք է արտացոլի 807 ենթաբաժնի համապատասխան հաշիվներում, իսկ դրանց ձեռքբերման գնի և ընթացիկ (շուկայական) գնի տարբերությունը՝ եկամուտներում կամ վնասներում:

Ենթաբաժին 808
«Արժեթղթերի փաթեթի կառավարմամբ առաջացած ածանցյալ գործիքներ»

Այս ենթաբաժինը նախատեսված է արժութային, արժեթղթերի և այլ ածանցյալ գործիքների պայմանագրային արժեքի հաշվառման համար: Արժութային ածանցյալների դեպքում արտարժութային միջոցների գրանցումը կատարվում է գործարքի կնքման օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած հաշվարկային փոխարժեքով:

ԲԱԺԻՆ 81
«Բրոքերային ծառայություններից առաջացած ակտիվներ ներդրումային ընկերության մոտ»

Այս բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից. 810 «Բրոքերային գործունեությամբ ստացված/ձեռք բերված ակտիվներ», 811; 812 «Բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխատվություններ, 813 «Բրոքերային ծառայությունների մատուցման ներքո կնքված ռեպո համաձայնագրեր», 814 «Բրոքերային ծառայությունների մատուցման ներքո կնքված արժութային սվոպ», 815 «Բրոքերային ծառայությունների մատուցման ներքո կնքված ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր», 816 «Բրոքերային ծառայությունների մատուցման ներքո կնքված արժութային սվոպով վաճառված արժույթ», 817 «Բրոքերային ծառայությունների մատուցման ներքո կնքված ռեպո համաձայնագրերով ձեռքբերված արժեթղթեր», 818 «Բրոքերային ծառայությունների մատուցման ներքո կնքված ածանցյալ գործիքներ» ենթաբաժիններից:
Սույն հրահանգի իմաստով բրոքերային գործունեությունը «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված ծառայություններ են: Այս բաժնի հաշիվների հաշվառման սկզբունքները նույն, ինչ-որ բաժին 80-ինը:

ԲԱԺԻՆ 82
«Ներդրումային ընկերության պարտավորությունները հիմնադրի (հաճախորդի) նկատմամբ»

Այս բաժինը բաղկացած է 820 «Պարտավորությունները հիմնադրի (հաճախորդի) նկատմամբ», 821;822 «Արժեթղթերի փաթեթի կառավարմամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ», 823 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրերի ներքո կնքված ռեպո համաձայնագրեր», 824 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրերի ներքո կնքված արժութային սվոպի գծով պարտավորություններ», 825 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրերի ներքո կնքված ռեպո համաձայնագրերի գծով պարտավորություններ», 826 «Արժեթղթերի փաթեթի կառավարմամբ առաջացած ածանցյալ գործիքներ», 827;828 «Բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ, 829 «Բրոքերային ծառայությունների մատուցման ներքո կնքված ռեպո համաձայնագրեր», 830 «Բրոքերային ծառայությունների մատուցման ներքո կնքված արժութային սվոպի գծով պարտավորություններ», 831 «Բրոքերային ծառայությունների մատուցման ներքո կնքված ռեպո համաձայնագրերի գծով պարտավորություններ», 832 «Բրոքերային ծառայությունների մատուցման ներքո կնքված ածանցյալ գործիքներ» ենթաբաժիններից:

Ենթաբաժին 820
«Պարտավորությունները հիմնադրի (հաճախորդի) նկատմամբ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են հիմնադրի նկատմամբ արժեթղթերի փաթեթի կառավարման և բրոքերային ծառայությունների մատուցմամբ առաջացած պարտավորությունների հաշվառման համար:

Ենթաբաժին 821;822
«Արժեթղթերի փաթեթի կառավարմամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ»

Այս ենթաբաժնի հաշիվներն օգտագործվում են կառավարման պայմանագրի համաձայն ներգրավված փոխառությունների, վաճառված արժեթղթերի դիմաց ստացվելիք կրեդիտորական պարտքերի, ներգրավված փոխառությունների դիմաց վճարվելիք տոկոսների հաշվառման համար: Բաժնի հաշիվները կրեդիտագրվում են ներգրաված փոխառությունների, կրեդիտորական պարտքերի և հաշվեգրված վճարվելք տոկոսների ավելացման դեպքում, դեբետագրվում են փոխառությունների ամբողջությամբ կամ մասնակի մարումների, կրեդիտորական պարտքերի և տոկոսների վճարման դեպքում:

Ենթաբաժին 823
«Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրերի ներքո կնքված ռեպո համաձայնագրեր»

Ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ներդրումային ընկերության կողմից արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրերի ներքո կնքված ռեպո համաձայնագրերի համաձայն գնած արժեթղթերի վերադարձման պարտավորությունը հաշվառելու համար:

ԲԱԺԻՆ 84
«Եկամուտներ և ծախսեր (վնասներ)»

Այս բաժնի հաշիվները նախատեսված են ներդրումային ընկերության կողմից հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական ակտիվներով գործառնությունների ֆինանսական հետևանքները հաշվառելու համար: Այս բաժնի հաշիվները փակվում են թղթակցելով 86 ««Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք» բաժնի համապատասխան հաշիվների հետ (ըստ գործունեության տեսակի՝ արժեթղթեր փաթեթի կառավարումից կամ բրոքերային գործունեությունից):

ԲԱԺԻՆ 85
«Տեղաբաշխման ենթակա արժեթղթեր»

Այս բաժնում հաշվառվում են հաճախորդի միջոցներով կնքված ածանցյալ գործիքներն ու նրա կողմից թողարկված և տեղաբաշխման ենթակա արժեթղթերը:

ԲԱԺԻՆ 86
«Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»

Այս բաժինը բաղկացած է մի հաշվից: Այս հաշիվը նախատեսված է հիմնադրի կողմից ներդրումային ընկերությանը բրոքերային գործունեության և/կամ արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրերի համաձայն տրված ակտիվների գծով ստացված ֆինանսական արդյունքների ամփոփման համար:

ԲԱԺԻՆ 87
«Այլ միջոցներ և պարտավորություններ»

Այս բաժնում հաշվառում են հաշվեկշռից դուրս գրված վարկերը, դեբիտորական պարտքերն ու այլ ակտիվները: Դուրս գրված գումարները կամ դրանց մի մասը այս բաժնից նվազեցվում են ակտիվների վերադարձման դեպքում: Չվերադարձված ակտիվներն այս բաժնից դուրս են գրվում գրանցման պահից հինգ տարի անց:

ԲԱԺԻՆ 88
«Պահանջներ և պարտավորություններ վարկային գծերի, քարտերի և ածանցյալ գործիքների գծով»

Այս բաժինը ներառում է 880 «Վարկային գծեր և քարտեր» և 881 «Ածանցյալ գործիքներ» ենթաբաժինները: Այս բաժնի հաշիվները նախատեսված են ներդրումային ընկերության կողմից իր սեփական միջոցներով կնքված ածանցյալ գործիքների, վարկային գծերի և քարտերի միջոցով ներգրավված միջոցների հաշվառման համար, մասնավորապես վարկային գծերի և քարտերի չօգտագործված մնացորդների հաշվառման համար:

ԲԱԺԻՆ 89
«Գրավ և երաշխավորություններ»

Ենթաբաժին 890
«Ստացված գրավ»

Այս ենթաբաժնում հաշվառում են վարկերի և այլ փոխատվությունների դիմաց ստացված միջոցները: Գրավի առարկաներն այս ենթաբաժնի հաշիվներից դուրս են գրվում գրավատուին գրավի հետ վերադարձման կամ գրավի իրացման ժամանակ:

Ենթաբաժին 891
«Ստացված երաշխավորություններ»

Այս ենթաբաժնում հաշվառում են վարկերի և այլ փոխատվությունների դիմաց ստացված երաշխավորությունները: Այստեղ հաշվառվող գումարները դուրս են գրվում երաշխավորությամբ տրված վարկերի և այլ փոխատվությունների մարման կամ երաշխավորությունների դիմաց վճարում ստանալիս:

Ենթաբաժին 892
«Տրամադրված գրավ»

Այս ենթաբաժնում հաշվառվում է ստացված վարկերի և այլ փոխառությունների դիմաց տրամադրված գրավը: Այստեղ հաշվառվող գումարները դուրս են գրվում գրավով ապահովված վարկերի և այլ փոխատվությունների մարման կամ գրավի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի դեպքում:

Ենթաբաժին 893
«Տրամադրված երաշխավորություններ»

Տրամադրված երաշխավորություններն այս ենթաբաժնի հաշիվներում գրանցվում են երաշխավորության տրման օրը: Գումարները դուրս են գրվում տրված երաշխավորության ժամկետի մարման կամ երաշխավորության դիմաց վճարում կատարելու օրը:

ԲԱԺԻՆ 90
«Վարձակալություն»

Այս բաժնում հաշվառում են ներդրումային ընկերության կողմից գործառնական վարձակալությամբ ստացված և ֆինանսական վարձակալությամբ տրված հիմնական միջոցները:

ԲԱԺԻՆ 91
«Արժեքների պահպանում»

Այս բաժինը նախատեսված է ի պահ ընդունված և ի պահ տրված ակտիվների ակտիվների հաշվառման համար: Այն դեպքում, երբ ներդրումային ընկերությանը հայտնի չէ ի պահ ընդունված արժեքների գինը, դրանք գրանցվում են 1 դրամ պայմանական արժեքով: